

ԱՐԵՎԱՆ

ԱՄՍԱԳԻՐ


ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ. ԳՐԱԴԻՏԱԿԱՆ.
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1877


ՅՈՒՆՎԱՐ



ՄԶԿԻԹ ՕՄԱՐԱՅ (ՀԻՆ Տ. ԱՊՈԼՈՅՈՆԻ)

ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԵԱՆՑ



This image shows four separate fragments of decorative metalwork, likely from a larger object like a buckle or ornate furniture. The fragments feature intricate designs including stylized floral motifs, geometric patterns, and decorative borders. The materials appear to be brass or bronze, with some loss of patina and surface damage.

Բ-ՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Թիի 1.

ԱՄՍԱԳԻՐ

ԹԱՐՅԱԿԱՐ 31
1877.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

“Mr SWIFT”

Ա ՄԵՆ ոք մէկ տոքը անցելցն վեր-
ջադրան և միւսը ապագայի նախաղը բան
սեմոց վերայ զրած պահ մի կանգ կ'առ-
նէ, իւր օրտի խորերէն թախնագին հա-
ռաշմի կ'արձակէ անցելցն վերայ, թէ և
արեամբ ներկեալ, թէ և արտասուզ
ողողեալ, վասն զի ապագայն խորհրդ-
դաւոր քողով մի ծածկուած է, ոչ ոք
գիտէ, ոչ ներհուն քաղաքագէտը, ոչ
իմաստուն տնտեսագէտը եւ ոչ խա-
ղաղակեաց շնականը, թէ ինցպիսի
երկունքներով կը գայ ապագայն, քա-
րեացառիթ, թէ շարադուշկ, ոչ
ոք գիտէ, թէ ապագայն խաղաղու-
թիւն, խնդութիւն և քարօրութիւն
կը բերէ, եթէ ոչ պատերազմ, արիւն,

արցունք և սուր : Խորհուրդ մի է այս
մարտիալին մասաղ համար :

Եթէ այս անստուգութեան մէջ
ք լինէր մարդոյն միտքը լուսաւորող
եւ հոգին կազդուրով լցո մը : մարդ-
կային կեանքը կը լինէր արդարեւ ա-
ղետից և վշտաց անըմբերելի չզթայ միւ
Այս լցով օր ըստ օրէ ՚ի բարօրութիւնն
օր ըստ օրէ ՚ի բարեկեցութիւնն դիմե-
լու յոյսն է , յուսով կը մոռանան աղ-
գերը իրենց փառաւոր եւ երջանիկ
անցեալը . յուսով կը մոռանան նա ևս
եթէ ունեցած են , չարածնունդ ան-
ցեալը : Մի և նոյն յոյսը ոմանց հա-
մար կեանք է , և ոմանց համար մահ :

Կան տղթեր, որ յուսով կը վերա-

ծնին և կ'ապրին, կան, որ պատիր յուշ սովարքը չեալ կը թմրին և կը մեռնին, կան աղգեր, որ յաւէտ յառաջադիմելու, յաւէտ բարեվիճակ կացութեան մի հասնելու համար յուսով կը գործեն, կը յառաջադիմեն և բարեկեաց վիճակ մի կը սուանան, կան ալ որ լիկ յուսով կ'ապրին առանց գործելու, առանց յոգնելու եւ առանց քրանելու, յուսով կ'ակնկալեն յառաջադիմել, լուսաւորիլ եւ ծայրագոյն քաղաքակրթութեան ասպարէզը թեւակոխել. կը մնան հոն, ուր որ էին առաջ, կը մնան անշարժ, կը մնան անփոփոխ և աննորոգ: Կեանքը առանց շարժման կ'ընդարձանայ, կը փոտի և վերջապէս կը սպառի, վասն զի կենաց սնունդը՝ գործունէութեան ոդին է. կենաց մեքենային շարժիչ զօրութիւնը, շոգին՝ շարժումն է:

Այս է բնութեան օրէնքը, շարժիլ նորոգելու համար, գործել ապրելու համար: Այս օրէնքին դէմ ստահակներուն համար ըստ կացութեան, առողջութիւն կենաց, նորոգութիւն կացութեան, աւուրց, ամաց և գարերութեան կենաց կունի մանկութիւն, սպատանեկութիւն և երիտասարդութիւն, այլ միմիսյն մէկ հասակ. այն է վըշտաբեկ եւ կորաքամակ ծերութիւն. ծերութիւն 'ի մանկութեան, 'ի սպատանեկութեան եւ յերիտասարդութեան: Նոքա, որք յուսով կ'ապրին առանց գործելու, չունին տարւոյն եղանակները, չունին գարուն, չունին ամառն և ոչ աշուն. նոցա եղանակը մէկ է. այն է ձմեռ, տիսուր և անկենդան եղանակ, ինչպէս է անդործ կեանքը: Գարունը աշխատաւորին պէտք է որպէս զի գործէ, երկրագործին պէտք է, որպէս զի սերմանէ, նոյնպէս ամառն, որպէս զի հասունացնէ երկրագործին աշխատանքն ու քրտինք, և հունձք տայ

նմա, աշունը, որպէս զի հերկէ երկրը, և ձմեռն, որպէս զի վայելէ իւր քըրտանց պտուղը:

Գործն ու գործողն են, որ ժամանակը կ'եղանակաւորեն և կը նորոգեն. միօրինակութիւնը, ամեն բանինկատ մամբ տաղտկութիւն և ձանձրութիւն է. այս է պատճառը, որ դատարկութեան անձնատուր մարդիկ առանց զգալու իրենց թերութիւնը, ժամանակէն կը տրտնջան, ամեն չարիք, ամեն դժբաղդութիւն և ամեն արկած ժամանակին կը վերագրեն: Ժամանակը գէշէ կ'ըսեն, ժամանակը ձախորդ է: Սակայն այս դատաստանը, այս վրձինը անարդգար է. ժամանակը ամենուն համար նոյն է. ամենուն համար մի և նոյն Աստուծոյ պարգեւն է. ուստի անբնական է կարծել, որ ժամանակը այս ինչ ազգին, կամ այս ինչ ընկերութեան համար աղէկ լինի, ուրիշ մը համար վատ, անբնական է կարծել որ ժամանակին ըլլայ այս ինչ երկրին համար բարեացառիթ և երկրորդի մը համար աղէտաւոր: Աւելի բանաւոր, աւելի արդար կ'ըլլայ դատաստանը, եթէ փոխանակ ժամանակին մարդկանց վերայ ընեմք, վասն զի ժամանակը գործոն էակ մի չէ, որ ընդունակ լինի բարի, կամ չար գործելու. այլ մարդն է, որ կ'ընէ, մարդն է որ կը գործէ. մարդն է հեղինակ ամեն գործոց: Ժամանակը միայն հաւատարիմ աւանդապահ մի է, անօթ մի է, որ իւր մէջ կ'ընդունի առաքինուցն առաքինութիւնը, մեծագործին՝ սիրագործութիւնը, անօրինին՝ անօրէնութիւնը, զրկելցն՝ ողբն ու արտուրքը:

1876 թուականը, որ մեզ իւր վերընին հրամեցը կը տայ, կ'երթայ այլ եւս ըստ վերագառնալու պայմանաւ. հարկ է դատափետել, թէ աղէտալի և արիւնաօծ թուական մի եղաւ: Նա

էր, ինչ որ իւր նախօրդներն էին, ու նէր չօրս եղանակ, ամեն օր մեղ արև ու լոյս, կեանք ու օր տուաւ, մարդն էր օր պատեց զանի փշով ու տատառ կոլ, և նա իբրեւ հաւատարիմ և ան կեղծ տւանդապահ տարաւ հետը ինչ որ մենք ըրինք և տուինք իրեն, տարաւ եւ աւանդեց պատմութեան ՚ի նախատինս ընկերականութեան:

Արդեօք ՚ի մասնաւորի մեր Ազգը ինչ աւանդեց 1876 թուականին, փառք թէ տօմօթ, լայ թէ խնդութիւն, յառաջադիմութիւն, թէ յետադիմութիւն, աւելքրդ է այս մասին երկար հետազոտութիւն, վասն զի քանի որ համայն Թուբքից համար սուդի եւ վերջին ճգնաժամի տարի մի եղաւ 76ը, անշուշտ մեր ազգն եւս իբրեւ զաւակ երկրին պիտի կրէր և զգար այն ցաւն ու երկունքը, զոր բովանդակ երկիրն զգաց եւ կրեց, անտարակցոյս պիտի մասնակցէր այն ամեն աղէտից, որք ոչ մի մասնաւորի չէին գար, այլ ամբողջ Թուբքաստանցւոց: Այլ էին այդ ցաւոց և աղէտից հեղինակները, ժամանակիլ, թէ մարդիկ, — ժամանակը միայն հանդիսատես վկայ մի էր. իսկ մարդիկ էին գերասանք այդ եղերերդութեան, մարդն էր, որ զմարդն յօշտեց, մարդն էր, որ մարդոյն գործն ու հաց յափշտակեց, մարդն էր, որ մարդոյն կենաց, պատույն և ընչցոց ապահովութիւնը խլեց: Ամօթ և մշան ջննական նախատինք մարդոյն, որ իւր անձնական ազատութեան համար, ընկերին ազատութիւնն ու կեանք բարցաւ, անձնական հանգստութեան և բարօրութեան համար ընկերին պատիւն ու կեանք զոհեց:

Ահա, տասն և իններորդ դարու վեմած կրէը, որ թէ և լուսաւորութեան և յառաջադիմութեան նշանաբանով կը պարծի և կը պանծայ, այլ

սակայն իւր Ճակատին վերայ մարդոց արեամբ կնքեալ դրօշմ մի կը կրէ, գեռ եւս 71 ին թափուած բիւրաւոր ներու արիւնը չը ցամաքած, արեան նոր գետեր հոսեցան, դեռ եւս 71 ի անհամար մարդկանց դիակներն չը փատած, ընկերականութեան մթնութրաը նոր ոճիրներով պղծեցաւ, դեռ եւս 71 ի ընտանեկան աւերանաց եւ փլատակաց ծուխն ու փոշին չ'անհետացած, ընտանեկան նոր աւերներու եւ մարդածախ հրդեհներու շեղեր բարձրացան: Երբ 75ը 76 ին տեղի կը տար, ոչ ոք գիտէր և կ'ամսնկալէր այս ամենը, այլ ընդհակառակն ամեն ոք մեծամեծ յցսերով ողջունեց 76ի գալուստը, և ով կարող է ըսել թէ 77 ին պատահելիք գիտաց եւ գործոց ընթացքը գիտեմ:

Այս ամեն արկածից մէջ կան մը խիթարութիւններ եւ յցսեր, որոնք դարձեալ 76 թուականին մէջ ծնունդ առնին, թէ և շատ նեղուեցանք, շատ տառապեցանք, բայց իսպառ անցուսութեան և ծայրագոյն թշուառութեանն անդունդը գահամիթելու երկիւղներէն աղատեցանք մեր երկրին կրած գրկարար յեղափախութեամբք: Կան գմբազգութիւններ, որք մահ կը ծնանին, կան ալ, որոց հետեւութիւնը փրկարար կ'ըլլայ, Թուբքից կրած ճախողուածոց հետեւութիւնն եղաւ երկրին բարենորոգմանց օրէնքին, Ահա մանադրութեան հրատարակութիւնը: Եթէ գործադրուի այս օրէնքը, երկրը նոր կեանք և նոր շունչ պիտի առնէ, երկրացին ինքզինքը անխիղմ և աւարտուու հրուներու ոճիրներուն գէմ պիտի պաշտպանէ, արդարութիւն և իրաւունք պիտի գտնէ, անհատական իրաւունքը եւ ընտանեկան անարդեալ պատիւը պիտի բարձրանան իրենց վսեմ աստիճանին, արդա-

բեւ այն ժամանակ պիտի լինի մեզ համար 77ը Նոր ՏԵՐԻ . իսկ ընդհակառակը եթէ օրէնքն ալ քարողանայ այս ամենատեսակ չարեաց տռաջքն առնուլ, թուականներու փոխախութիւնն իսպառ անօգուտ է . աղէտներն և չարիք միշտ նոյն պիտի մնան եւ գուցէ աւելի եւս զօբացած, որոց պատասխանատուն ոչ թէ ժամանակը, այլ մարդիկ են :

Տարեմուտին օրը զինի Ս. Պատարագին ըստ սովորութեան Ս. Ու խոտիս Եկեղեցական դասը եւ Ժառ . Վարժարանի աշակերտք շարականաւ Ս. Պատրիարքը՝ ի Պատրիարքարան հանեցին . ուր երգեր երգուեցան եւ նոր տարրեցն առմիւ Ճառեր կարդացուեցան ի գիմաց Դպրաց դասուն և Ժառանգաւոր Սանուց . Ս. Պատրիարք Հայրն ալ համառօա խօսքով մի ամենուն Նոր տարի շնորհաւորեց եւ յորդորեց Միաբանութիւնը, որ նոր սգւասվ և նոր եռանդով աշխատի աղդի իրաւանց պաշտպանութեան, եւ Ս. Տեղեաց պայծառութեան համար, ինչու որ միշտ կ'աշխատի . եւ ապա օրհնութեամբք եւ բարեմաղթութեամբք կընքեց խօսքը : Մի և նոյն օրը Հայրաբար այցելեց Ժառանգաւոր Վարժարանը, աշակերտք երգասացութեամբ ընդունեցին և իրենց երախտագիտական զգացումները բացատրող Ճառ մը կարդացուեցաւ . Ս. Պատրիարքը օրհնեց աշակերտաները եւ քաջալերեց, որ նոր տարրեցն հետ նոր մոքերով և նոր զօրութեամբ յառաջադիմեն իրենց պարտուց և ուսմանց մէջ :

Պատրիարքարանի մէջ խօսուած Ճառ ռերէն հարկ կը համարիմք հետեւեալը Ակնի մէջ դնել ի քաջալերութիւն :

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Ս. ՀԱՅՐ

ԵԽ ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏԵՐՈՐ

Թօնէւ պատկառանքը, թէեւ որ կարութիւնը չեն ներեր ինձ խօսել այսպիսի վեհաշաք ատենի մը մէջ, բայց նուիրական պարաւարութենէ մը բռնադատեալ հարկադրեցաց նոր տարրեցաց առմիւ մի քանի բառ թութով, ուստի Զեր ներոզավոր ունեկընդունելու կը հայցեմ :

Այսօր, յաւիտենականութեան գուշակը՝ ժամանակը, տարի մի եւս տարաւ և անցելցն վերայ բարդեց . հինգ էանց և նորն յաջորդեց . 1876 աղետալի թուականը գնաց և 1877 ը Ակաւ, չեմք գիտեր՝ բարեօք թէ շարեօք լի, ի մի բան, այսօր մարդկութեան կենաց շղթայէն օվակ մի եւս պականցաւ :

Ժոմանակը սրբնիթաց գետոց հռասանաց պէս կը սահի կ'երթայ առ ոսն հարկանելով ամեն խաչ ու խութ . դարեր, տարիներ և ամիսներ կը նորոգին, աւուրբք զաւուրս և ամք զամանեցն : Այս է նախամինամութեան անցեղի օրէնքը :

Մարդկային ցեղեր իրար հետ կը մրցին . ապագայն սքանչացնելու համար իրենց հանձարի, տաղանդի եւ զօրութեան կնիքը հրաշակերտաներու վերայ կը դրոշմէն, այս է մարդկութեան պարտաւորութիւնը, միշտ ապրիլանմահ յիշատակներով . յաւիտեան ապրիլ, սիրալի և նախամինամական բարեգործութեամբք :

Յաւիտեան ապրիլու կանոնն ու օրէնքը ժամանակի բարւոք կիրառութիւնն է, հարկ է ուսումնասիրել ժամանակը, ուսումնասիրել ներկայն և մակարերել ապագայն : Առանց այս կանոններուն

աղքերը կորսանեան վիհը կը գահամիլւ մին . անհատները անհետ կը ջնջուին . վասն զի այն աղքը կամ այն անհատը որ չը խորհիր իւր անցելցն վերաց , չ'աշխատիր անցեալով հրահանդիլ ինչ որ էր անցելցն մէջ , նոյնը կը մնայ . Եթէ անցելցն մէջ խար տգիտութեան մէջ ընկղմած էր , ներկային մէջ դէպ 'ի յառաջադիմութիւն չքայլափոխեր . Եթէ անցելցն մէջ զեղծեալ էր ամենատեսակ ապահանութեամբ եւ ոլրծութեամբ , ներկային մէջ եւս անուղղոց կը մնայ . նորա ապագայն ակցոյս է :

Վարժարանները , կրթարանները և բարեգործական ընկերութիւնը աղքաց փրկութեան յենարաններն են : Դաստիարակութիւնը 19 դարու Պրոպագանիկի աւագանն է , որ ամեն ախտամէտները , ամեն անդամոլցները կը որբէ և կը փրկէ : Այս ամենուն կարեւորութիւնը , կենսականութիւնը ժամանակը կ'ուստուցանէ և ժամանակը կ'զգացնէ : Եթէ չը դիտեր ոք ժամանակի բարւոր կիրառութիւնը , չդգիտեր նա անմահանալու եղանակը . նորա կեանքը այսպէս կը նկարագրէ մարդարէն . «Աւուրբ նորա որպէս աւուրբ խոտոց , ծաղկի որպէս ծաղկի վայրի . շնչէ ինմահ հողմ և ոչ է և ոչ եւս երեւի տեղի նորա :

Փամաք գարսուս փրկարար յեղազըրջումներուն , փամաք լուսափիւս հոսանաց կրթութեան և դաստիարակութեան , որը փոքր 'ի շատէ մեր աղքըն ալ ցնցեցին , մեր աղքն ալ սօմափեցին տգիտութեան խար ու մահառիթ թմրութենէն : Բացաւ աչքերը , շուրջ յածեց , աեսաւ աղքաց հսկայաբայլ յառաջադարձիմութիւնը , աեսաւ ժամանակի գործած հրաշքները , ըզգաց վարժարաններու և կրթարաններու կարեւորութիւնը . նախադասեց

դաստիարակութեան հոգն ու պէտքը հացի խնդիրէն . ամեն աեղ , ամենուն համար առհասարակ հարուստին ու աղքատին համար զգալի եղան գրին ու գրբին կարեւորութիւնը : Եթէ այս խանդը , այս եռանդը միօրինակ շարունակէ մեր աղքը , Եթէ սգտածաւրաւ հայ մանկակին պարտուց և իրաւանց , մտաւոր ու բարյական ուսումանց մէջ վարժելու հոգն ու խնամքը չը պակախն . Եթէ դաստիարակք , որք ներկայ սերունդը վերածնելու կոչուածնն , իրենց անդուլ և աննախանձ ջանքին ու աքենութիւնն կրկնապատկեն : առաւել եւս պիտի յառաջադարէն մեր աղքը :

Ժամանակը անդադար յառաջ կը վազէ , համբնթաց կը վազեն և նաքաս որք ժամանակի քաղանցքը բռնած են . ըսկ խօսքը չօգներ ժամանակին հետ ընթանալու համար . այլ անհրաժեշտ կարեւոր են գործ և աշխատութիւն , յարատեւ ջանք ու համբերութիւն՝ որք խօսքը կը պսակեն :

Տգիտութեամբ կործաննեցան մեր թագաւորութիւնները , տգիտութեամբ անկաւ մեր տունը , տգիտութեամբ յօշոտեցաւ մեր գրախտանման հայրենիքը , բայց դիտութեամբ պիտի վերականգնին մեր առունն ու հայրենիքը անցելցն վլատակաց տակէն , գիտութեամբ պիտի վերածնի մեր վարատական աղքը : Դիտութիւնը Եղեկիայի 'ի տեսլեան զգացած այն Աստուածային շունչն է , որ մէկ ակըն թարթի մէջ ընդարձակ դաշտին վերաց ափուուած մեռելուի ոսկերաց հոգին ու կեանք տուաւ :

Արբազան Հայր , Գուք և Աթոռոյս Միաբանութիւնը քաջգալով թէ առանց գիտութեան չիք փրկութիւն , առանց լուսաւորութեան չիք աղքատութիւն , Զեր այս անձուկ և վլտա-

Այս վեճակին մէջ անգամ յետու չէք կաս սիր Ազգի յառաջադիմութեան մեծ գործոյն նպաստելէ . Չեր քիրտն ու ջանքը չէք խնայեր Հայ մանկուցն լուսաւորութեամբ եւ դաստիարակութեամբ հրահանգուելուն համար . Այս տառապանաց ու նեղութեանց մէջ առանց տեղէ մը օգնութեան յոյս և ակնկալութիւն ունենալու հոյակապ և բազմածախ դպրոց մի պահպանելը և խնամելը յիրաւի մեծ պարձանաց արժանի է . Ներկայն երախտագիտական զգացմամբ լի կ'երթայ անցելցն պատմելու Չեր ազգաշնութեան այս գործը և ապագայն եւս օրհնութեամբ պիտի յիշէ դարուց ՚ի դարս :

Արբազան Հայք , Չեր այս ջանքն ու սուրբ իշելք ապարդիւն շը մնացին . Չեր թեւոց հովան ոյն տակ ժաղախած Հայոց ուսումնակինդիր մանկունքը ժամանակին հետ օր ըստ օրէ աճեցան մատոց և սրտի մշակութեան մէջ եւ սինտի աճին այսուհետեւ շնորհիւ անդուլ ջանից և խնամաց Չերդ Արբազ նութեան և անխոնչ վաստակաց մէր դաստիարակաց : Դաստիարակութեան մը հիմունքը եթէ պարտաճանաչողու-

թիւն քլինի , ամենեւին անօգտառ և անարտուղէ . և կը նմանի աւազի վերայ շնուռած տան , որ ամենամեծեթեւ հողմէ մը կը կործանի :

Ժառանգաւոր Սանուցա , որդւոցդ համար երախտագիտութիւնը և պարտաճանաչողութիւնը նախամեծար է քան մարի մշտիութիւնը . ուստի ինչ պէս ամեն օր Չեր կենոց և կենդանութեան համար ջերմ մաղթանիքներ կ'ողղեմք առ բարձրեալի Աստուած , նոյնպէս այսօր նոր տարւոցս առթիւ կը մաղթեմք Նախախնամնութենէն , օր շատ նոր օրեր և նոր տարիներ պարգևեւէ Արբազութեանդ , Սուրբ Աթոռուցս գործոց բարի յաջողութիւն . Միաբանութեան՝ կարողութիւն , զօրութիւն , և համբերութիւն , ներկայ տառապակիր կացութենէն ազատութիւն . թէ Արբազութեանդ և թէ բոլոր Միաբանութեան երկար ու երջանիկ կեանք՝ յօդուած և ՚ի շնուռաթիւն Ա . Աթոռուցս և ՚ի փառս լինդ հանուր Հայ ազգութեան :

Գևորգ Ներսիսեան

Անդապրի

1877

Յունակը 1

Աշա . Ժառանգականի :

Ի ՇԻՐԻՄ ՍԻՐԵԼԵԱՅ ԻՄՈՅ ԵՂԵՐԵՐԳ

Մինչ հիւսիսին փուրքը մըռընեն սաստիասոյլ ,
Եւ թօթափին տերեւք տընկոց հոյլ ՚ի հոյլ ,
Հովածածիծաղ թօնի շուշանն յիւր բունիկ ,
Եւ սոխակին լըռեն երգոց դայլայլիկք ,
Բնիսատ առեալ ընդ մութ շքքով դամբանին՝
Զորով նոճիք նըսեմաստուերք բոլորին ,
Գել գել ջայլուք ողբոց ըզձեզ արտասուեմ ,
Ո' սիրելեաց իմ դուք ոգիք երկնաձեմ :

Բիւր ձըմիւրանց գլեցան անիւք ստուագին ,
 Գարունիք հազարք զերկիք ՚ի շնորհ պճնեցին ,
 Բուրումն անցա անմահութեան ծաւալեաց
 Եափիլսգեղ յալիս օդցին մըկանանց ,
 Զի՞ զձեղ հանգոյն սիրաստեղնեալ սուրբ ծաղկանց
 Աչք եղիելոյս ոչ ՚ի շնրմին ըստուերաց
 Տեսին անդրէն կարգ ըստ կարգէ վերկենցալ
 Ո՛վ որ ՚ի մասրա հանգըք մահու դուք խաղաղ :
 Ո՞չ ՚ի համբար սիրաց բնութեան կենսածին
 Եւ քաջըրասիք հողմոց ՚ի շունչ ջերմոգին
 Փունչ փունչ ՚ի վեր փըթթեալ ծաղկունիք բաղմերին
 ՊՃնին կողերք յառայդ ՚ի ախո մանկութեան .
 Հիմ և ՚ի շունչ հրատից սրտիս մշտածախ
 Բայցուրա շնրմաց թօթափելով լորեալախ
 Ո՛չ իմ հոգւցս դարձցին հատորք առ ՚ի կեանս
 Երկուց հնդից ամաց նորոգ յաղմականս
 Ո՞հ զարթիք օ՞ն զարթիք ալ լցոք իմ աչաց ,
 Տուք տեղի գամ մի մահաստուեր դամբանաց .
 Օ՞ն անդր ՚ի բաց մեռելսկանն ըզթըմբիք
 Դէմք գեղսցէք այդուց զուգից լուսափիռ ,
 Աշկունիք առատք քան զպազպաջուն սրուսեալ ,
 Յորսց կաթեն հուր , խինդ և սէր կենսունեակ .
 Երթունիք կարմիրք քան զծաղկիս նունենեաց ,
 Յցց՝ յեւեւէջ ծաղու՝ կրկին ատամանց
 Գեղափայլեն սպիտակաշար մարդարիտք ,
 Երբ ՚ի վարդին թերթ ցօղից շարք իսիտ տռ խիտ .
 Ամրտք եռանդունիք յաղմուրք սառանց հիւսիսին ,
 Եւ գիւրազգտածք քան զողքերդու տատրակին .
 Ուլմնիք ձըմին գեղձան հերօք ծալ ՚ի ծալ ,
 Եւ պազպաջունիք քան ըզպորից ձիւնափայլ .
 Երանիք քնքոյցք պճնեալք յերկնից շնորհ և գեղ ,
 Որք զուարթառատ հանգոյն թիթւանց սիրազեղ
 Ճախր ըզծաղկամիք առնուիք ՚ի կայթ եւ ՚ի պար ,
 Զանմահական ծըծել ըզլոցն ըզնեկոտար .
 Աղէ զարթիք յիմ արտասուս յորդառատ ,
 Փըթթեցարուք իբր ՚ի գարուն նորահրատ ,
 Եւ յայտնեսցին ծածուկք գալսնեաց դամբանին ,
 Եւ ամբապինդ սարիք մահուն խըղեսցին
 Այլ զի՞ ՚ի ցնորս ինձ թարթափիլ ընդունայն ,
 Անդարձ է ցանդ ճակատագիք մարդկութեան .
 Հարկ է ծըլիլ նորաբողբոջ ծաղկանց պէս ,
 Խայտալ պարել զուարթուն կենաց յասպարէղ ,

Յաղօրս վարդից պՃնել զՃակատ գեղօրակ ,
Եւ զիենցաղցու առնուլ հեշտիցն ըզՃաշակ :
Իսկ ՚ի ընչել աշխան թեւօք մահաղգեաց՝
Հորկ է ծաղկանց թօշնիլ ՚ի խաղսա տռուտկաց .
Այս են օրէնք ճակատագրոյն անողոք ,
Եւ ընդունայն ընդդէմ նորին մեր բողոք :

Ա.Ա. թէ բնութեան գոյ ծաղկասիփու հեշտ գարուն ,
Յոր նա զարդու գեղով պՃնի ՚ի համբուն ,
Կենսանորոգ գարուն սեռիս մարդկութեան
Ցերանաւէտն մընայ յերկնից ՚ի կայան ,
Ուր մահացուած պըսակ ՚ի գլուխ բոլորին
Յակնախըտիզ յանմահ վարդից Եղէմին .
Անդ հրեշտակաց ՚ի յօթեւանս վարդալցու՝
Տեսից ըղձեղ անդրէն հստակը իմ հոգւոյս :

Ա.Ե. Կարաղեպիւան Կ. Պօլեցի
Ա.Հ. Ժառա . Վարժարանի :

ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

Բնական և տարրաբանական
կազմոթիւնն արեգական

Դ.

Արեգական բնական և տարրաբանական կազմութեան վերաց նախընթաց թուով խօսուածներէն ինչպէս կ'երեւի , հասած եմք այն կէտին , որով հարկ է լուծել արեգական ինչ ըլլալու խնդիրն . հարկ է հետազոտել այս հարցը , թէ ի՞նչ է արեգակը , որ երբեմն այնչափ մթին ու իրմթին էր և որ աստղագիտութեան համար միշտ կարեւորագոյն խնդիր մի է :

Գիտութեան հրաշալի յառաջաղիւ մութեամբ այսօր ո՛չ միայն կարողեմք արեգական տարածութիւններն եւ

հեռաւորութիւնը նշանակել , որ բոլոր մօլորակաց և զրութեան միւս երկ նային մարմնաց ոլորտներուն վառարան ըլք բանած է . ոչ միայն գիտեմք իւր զանդուածը և զինքը կազմող նիւթօյն խառութիւնը և իւր ջերմական , լուսական եւ տարրաբանական աղդեցութեան տարեկան սպառ ումը . այլ նաև գիտեմք մասամբ իւր գոյութեանց տարրաբանական կազմութիւնը . զիւտեմք , որ այս գոյացութիւնք նման են երկրագունոտը կազմող գոյացութեանց , և թէ անտարտիցս իւր զանդուածին մէջ կան մեզ ծանաթ պարզ մարմիններէն տարբեր մարմիններ , որոց էտեթիւնը հաստատուեցաւ վերջին ժամանակներս եղած զիտողութեամբք ։ Այնու ամենայնիւ գեռ ևս կան շատ խնդիրներ , որք ցարդ անլուծանելի մնային , որոց ամենակարեւորագոյնն է արեգակինային բծերու մեկնութիւնը . որուն բնական ընթացքով կը հե-

տեւի այս խնդիրը, թէ ի՞նչ է արեգական կուտին բնական վիճակը, հասաւասովն է, թէ հեղային կամ կտղոյին: Արեգական կուտը հասաւասովն կամ հեղային ենթագրելով կարելի չէ մեկնել իւր կազմութիւնը, շարժումը և այն երեւոյթները, որ յառաջ կը գան մմին բծերէն, նոցաթերաստուերներէն և անոնց համբաւացակից լուսաւոր մասունքներէն և այն ծակալիքներէն, որովք լուսագունաը ամեն մասամբ ծակատուած է:

Առ այս պիտի ամփոփեմք այն երկու կամ երեք գլխաւոր տեսութիւնները, որոնք մոտածուեցան այս ամեն խնդիրներուն լուծման համար, գիտել տալով հանդերձ, որ այս տեսութեանց առաջնորդ, նոր եղած երեւելի գիտերէն յետոյ միայն պատմական կարեւորութիւն ունի: Այս տեսութիւնը 1774 ին Աղբեսանդր Վիլսոնը ըրաւ, Պօտ, Միւշչլ, Ստրուէր պարզեցին, Հերշչլ կատարելուգործեց, վերջը Ֆրանսաւա Արակո մասամբ ձշմարտեց:

Ըստ սոյն տեսութեան «Արեգակը կը կը բաղկանայ մմին, կամ ոչ—լուսաւոր գնուածեւէ մը շրջապատեալ տարբեր հեռաւորութեամբը երեք միթեոլորտներէ, կոմ կաղային խուերէ»: Առաջն միթեոլորտը կեդրոնական կուտին ամենամերձաւորն է, կազմուած է լոնդիմահար և անգրադարձող ամպային խուեկ, ինքնին լցուանի, այլ միայն ընդունած լցոր կ'անգրադարձէ: Սորա կը յաջորդէ երկրորդ միթեոլորտը, որ ինքնին լուսաւորէ և կողմուած է կազեկ հրաշչկ սպիտակութեան վիճակի մէջ, այս է լուսագունա (photosphore), որ տեսանելի սահմանները կ'որոշէ եւ արեգական սկաւառակի շրջապատը կը ձեւացնէ: Երրորդ միթեոլորտն ևս ասոր վերայ է, թափանցիկ է, և իւր խուռաթիւնը կը

նուազի համեմատաբար, քանի կերպնէն հեսանամբ»:

Այս երեք միթեոլորտներուն, կամ պատասներուն օգնութեամբ կը մեկնէն բծերուն և իրենց տեսպերուն երեւոյթները, Կենթագրէին, որ կիզումներ, ուժգին ժայթքումներ մը մնողորտներու իւրաքանչւորը պատելով՝ ձեւացած անգունդին յատակը կ'երեւցնէին արեգական մմին կուտը այս էր բծերուն ամենասեւագոյնը: յետոյ խոռոշներու կազմն վերայ կ'երեւելի ամպային կամ կաղային երերորդ պատասը, այս ալ թերաստուերն էր, վերջապէս դուրս ցցուած լուսագընտական զանգուածոց կուտակութեամբ եւս կը բացատրէին լուսաւոր մասունքները: Գալուի երրորդ թափանցիկ միթեոլորտին, որ լուսագունաը կը շրջապատէ, ասոր մէջ կը ծփան ամպերը, կամ ամբողջական խաւարում բէ շրջապատեալ սարեւանդք:

Այս ենթագրութեան մէջ ամենէն աւելի անընդունելի մասն այն է, որ արեգակը մէծաւ մասամբ կարծր, պաղե միթին կը համարի, որովհետեւ այս ենթագրութեամբ անկարելի է ըմբռնել, թէ ի՞նչպէս ըստառիր լուսագունաի բարձրագոյն բարեխառնութիւնը շարունակ ներքին խուերուն հազորդը ուելով բուրիչ զրութեամբ, և թէ ի՞նչպէս այսպիսի նուրբ պատաս մի հաղարաւոր գարերու մէջ անսպառ չերմութիւն կը բուրէ: Արդ՝ այժմ կը մնայ ենթագրութեան այն մնօրը, որ արեգական բծերն լուսագունախն մէջ խոռոշներ կամ ծակեր կը համարի: Եթէ ենթագրութեան այս մասը ըստառի լիներ, այն ատեն լուսագունաը հակառակ Քերխովի տեսութեան, չը կարող լինիլ ոչ հասաւատուն և ոչ հեղիկային: Ահաւասիկ Քերխովի տեսութիւնը:

“Արեգական տարրաբանական կազմութիւնը՝ Վիլսոնի կարծածէն շատ աւելի պարզէ . ամբողջ կաւոք հրաշեկ զանգուած մի է հաստատուն , կամ հեղիային . որուն լցող , եթէ ինքը շրջատառուած չը լինէր շոգիովլյագեալ մթնոլորտավ մի , պիտի աար անընդհատ լուսապատճեր մը : Այս մթնոլորտն է , որ կը ծծէ լուսոյ այն ձառագայթները , որոնք առիախեալ զանազան շողիներու լուսապատճերներուն կը համապատասխանեն : Գալով բծերուն , ասոնք ամսկեր են , այսինքն պըզ ովրջակաւոր կարի խիտ շողիներու կոտեր , որոնք լուսագունտի լուսաւոր ձառագայթները արգիլելով մեղկերելին սկաւառակին վերայ իբրեւ սեաւ կամ գորշագոյն բծեր ու :

Ահա արեգական ընական կազմութեան վերայ երկու տեսութիւններ , որոնք բոլորովին միմեանց հակառակեն . որովհետեւ առաջննը՝ լուսագունտը կ'ընդունի իբրեւ կազոյին հրաշեկ զանգուած մի . երկրորդը՝ իբրեւ հաստատուն , կամ հեղիային զանգուած մի . լուս առաջին տեսութեան՝ բծերը լուսագունտին մէջ խոռոչներ են . իսկ ըստ երկրորդին՝ ամսկեր : Այս երկու տեսութեանց որն է ձշարիստը . արդեօք այս երկուքին մէկը կամ միւսը սիստ չէն , եւ կամ գէթ անկատար : Այս որոշման մէջ կասեցաւ Պ. Ֆէյ , որ սոյն երկու տեսութեանց իւրաքանչիւրին վերտբերեալ ձշարտութեան մասը հետախուզելով հետեւեալը առաջագրած է :

Ըստ Ֆէյի արեգական ամբողջ զանգուածը կազոյին վիճակի մէջ է և կը բաժնուի համակեղրան խաւերու , որը իրարմէ կը տարբերին թէ բարեխառնութիւն և թէ չերմութեան և լուսոյ բուրիչ զօրութեամբ : Ներքին խաւերը այնպիսի ծայրագոյն բարեխառնու-

թիւն մի ունին , որ իրենց զանգուածներու բոլոր մասնիկները լուծեալ վիճակի մէջ են , և ուր տարրաբանական ներգործութիւններն չեն ազդեցին հակառակին արտաքին խաւերուն մէջ շարունակեալ ցրտութեան ազգեցութեամբ՝ մասնկաց և հիւլէներու զօրութեան ընթացքը յառաջ կը բերէ սառած մասերու վայրէներ եւ հրաշեկ սպիտակութեան ընդունակ ոչ կազային մասերէ ամսկեր , որոց միութեամբ անդադար կը կազմուի լուսագունտը : Այս մասնիկները ծանրութեամբ քաշուելով կիյնան ներքին խոռոչուն մէջ , և ասոնց գատարկացած տեղերը կը գրաւեն կազային վերեւ զանգուածները : Այս ուղղաձիգ հոսանքներէն տեղի կունենաց շարունակեալ վախիստութիւն մի արեգական մոլերեւութին և անոր ներքին զանգուածին մէջ : Իսկ բծերը կաշուն պատասի մը մէջ խոռոչներ , կամ ծակետիքներ են , որոց կազմութիւնը այսպէս կը բացարի : Պ. Ֆէյ :

“ Լուսագունտի կազմութեամբ կարող եմք հասկանալ բծերը և անոնց շարժումները . տեսանք արդեն , որ իրարու յաջորդող խաւերէն վերեւ եւ վայրէջ ուղղաձիգ հոսանքներ կ'ընթան : Սոյն անընդհատ ծփանաց մէջ անկասկած պէտք է ընդունիլ , որ հոն , ուր վերեւ հոսանքները աւելի խտաթիւն պիտի ստանան , լուսագունտին լուսաւոր նիւթը վայրէնական ժամանակ մը ցրեալ կը լայ : Այս լուսաւորութեան մէջէն երեւցողը ոչ թէ արեգական հաստատուն , ցուրտ եւ սեաւ կուտն է , այլ համատարած և կազային ներքին զանգուածն է , որոց բուրիչ կարողութիւնը ամենասատիկ հրաշեկ վիճակի մէջ ունեցած բարեխառնութեամբը՝ շատ տկար է համեմատութեամբ ոչկազոյին մասնիկնե-

թէ ձեւացած լուսաւոր ամսոց բուրիչ զօրութեան, որ սոցա տարբերութիւնը բաւական է բացատրել այն յայտնի անհամաձայնութիւնը, որ մեր մը թագնեալ ասպակիներով դիտուած երկու գոյներէն յաւաջ կը դայ :

Բարձր արժանաւորութեան տէր դիտողներ, ինչպէս Շագոռնագ. Աէգագի, Ադուարդ, ընդունած են, որ լուսուոր մասունքները ընդհանրապէս ձկուում մի ունին բծերուն ետեւը մը նալու թաւալտիան շարժման ուղղութեան ձախ կողմը : Ֆէյիին նայելով սոյն բնական հետեւութիւն մի է այն յապազման, որ կը վերաբերի լուսագունուին վերջնական սահմանին վերայ բարձրագոյն վերելութեամբ յաւաջ եկած ամսոց շարժման : Մի և նոյն կերպով կը մէկնուի նաև բծերու թաւալտիան շարժման արագութեան փոփոխութիւնը : Այս երեւցիթը համանմանէ այն երեւցիթին, որ երկրի վերայ կը պատճառէ հասարակածային կանոնաւոր հստանքները, կամ տարեւոր հողմերը :

Դէռ ևս զը վերջոցուցած սոյն նիւթը համառօտակի նշանակեմբ նուեւ այն պատճառները, որք առաջին տեսութեան հեղինակներուն կարծել արւին, թէ բծերը լուսագունուին ծակտիքներն են : Երբ բիծ մը կը շարժի եղբէն դէպ ՚ի արեգական կեղրոնիթ թաւալտիան շարժման աղբեցութը, հեալհետէ պարզ կերպով տեսութանական ձեւափոխութիւն մի կը կրէ . այն է երկար թելի մը ձեւէն տակաւ առ տակաւ լայնցած հաւկթի մը ձեւը կ'առնու : Երբ կեղրոնին վերայ կը հասնի . իւր բուն ձեւը կըսանայ : Իւր շարժման երկրորդ կէսին մէջ կեղրոնէն դէպ ՚ի եղբը, վերստին իւր տեսքերն կ'առնու հակառակ կերպով : Այս երեւցիթը արդար մի է համար կը թողումք անկարելութեան սիրահար երեւակայութեանց . որովհետեւ գետութեան անաջառ և խիստ քննութեան առջեւ անհետ կը կօրսուի : Եմէկ արեգական մէջ ցուրտ և մթին կուտ մի ընդունիմք, այն ատեն կտրող պիտի ըլլամք բացատրել և ըսել Արակցի որդւցին հետ : “ Եմէկ պարզապէս մեջ առաջարկուի այս խնդիրը, թէ արեգակը ընակելի է . պիտի սրատասիաննեմք, ոչինչ գիտեմք այդ մասին . իսկ թէ որ հարցուէր, կընայ

ունկարութեան, որ բոլորավին բնական կերպով կը բացատրուի արեգական գնուածեւութեամբ : Արդ՝ եթէ բիծը կոնաձեւ խոռոչ մի է յատակէն դէպ ՚ի մակերեւցիթը լայնցած, եթէ այս խոռոչն զառ ՚ի վայրերն ըլլային թերաստուերները . ինչպէս պիտի փոփոխութիւնը ըարժման ժամանակ . յայտնի է, որ առաջին անգամ պիտի երեւէր եղբին մերձաւոր թերաստուերը, յետոյ բծին յատակի կուար, և վերջը կեղրոնին կողմի թերաստուերը . երկրորդ կէս շարժման մէջ հետզհետէ պիտի աներեւութեանային : Նախ կեղրոնին մերձաւոր թերաստուերը, ետքը կուար, և ամենէն վերջը եղբին մերձաւոր թերաստուերը :

Արեգական բնակելի ըլլալու խրնդիրն ալ յուղողներ պակաս եղած չեն : Արեգական վերայ եղած ներկայ ծանօթութեանց մէջ, զըր համառօտեցինք, այս խնդրոյն լուծումը գծուարին չէ, որովհետեւ հրաշէկ զանգուած մի, որ անշուշտ մի քանի հազար աստիճան բարեկիսաւնութիւն ունի . զանգուած մի, որոյ մակերեւցիթին վերայ բոլոր մետաղները շոգիացեալ են, գործարանաւոր, կամ կենդանի երակաց գոյութեան հակառակի է : Արեգական բնակելի ըլլալու ենթադրութիւնը առասպել մի է, զըր կը թողումք անկարելութեան սիրահար երեւակայութեանց . որովհետեւ գետութեան անաջառ և խիստ քննութեան առջեւ անհետ կը կօրսուի : Եմէկ արեգական մէջ ցուրտ և մթին կուտ մի ընդունիմք, այն ատեն կտրող պիտի ըլլամք բացատրել և ըսել Արակցի որդւցին հետ : “ Եմէկ պարզապէս մեջ առաջարկուի այս խնդիրը, թէ արեգակը ընակելի է . պիտի սրատասիաննեմք, ոչինչ գիտեմք այդ մասին . իսկ թէ որ հարցուէր, կընայ

բնակելի լինիլ մեր երկրի բնակչաց համանման գործարանաւոր էակաց համար . ըստ պիտի աստամսէինք հաստատական պատասխան մի տալու . . . Յայց գիտութեանց Ակադէմիայի հռչակաւոր ասենագպրի մահուանէն յետոյ՝ արեգական կազմութեան ուսումը այն չափ յառաջադիմութիւններ ըրաւ, որ ըստ պիտի վարանի իւր կարծիքն ուղելու : Այնու ամենայնիւ արեգական բնակելի ըլլուլը երբէք իւր մեծ կարեւորութիւնը ըստ պակսեցներ . որուն հետեւ եթէ այս անհուն աստղը իւր ծոցին մէջ կեանք ըստ սնուցանէր, պէտք է գիտնալ, որ իւր զօրաւոր ճառագույթումներով արեգակնային աշխարհի բոլոր աստեղաց մէջ կենաց և շարժման ծնողը ինքն է :

Արեգակը իւր զանգուածով երկրի վերայ կը ներգործէ . երկիրը իւր ողբարին մէջ կը բռնէ . իւր ձգողական զօրութիւնը լուսնոյ ձգողական զօրութեան հետ միացնելով Ավելի նու ջրոց կիսօրեայ ծփնաւոր շարժումը, կամ ծովախաղացները կը պատճառէ . արեգական ճառագույթումներու ջերմութիւնն է գլխաւոր պատճառ մթնոլորտական խաւերու հաւասարակըսութեան այլայլմանց, ջերմութիւննեն է պատճառ հողմոց, օգտական հոստաց, շոգիացման գետոց, ջերու և ծովու ջրոց, որով երկրի մակերեւոյթին վերայ յառաջ կը գայ հոսանուա մարմնոց հանապաղբական շրջան մի . այս ազգեցութիւնն է պատճառ երկրաբանական խաւերուն դարաւոր կերպարանափոխութեանց՝ ժայռերու դանդաղ բայց շարունակեալ բայց բայց մամբ և հոսանքներէ յառաջ եկած նիւթոց տեղափոխութեամբք . վերջապէս արեգական ջերմութիւնը և լցոն են, որ անկական և կենդանական աշխարհաց մէջ ամեն ուրեք կեանք կը

սփառեն . Հումազոյտ երեւելի բնապատումը կը լի . “Արեգակական ազգեցութիւնը երբեմն հանդարտ և լրիկ կը յայտնուի տարրաբանական ներգործութեամբք և կ'օրոշէ կենաց այլ երեւոյթները, անկօդ վերայ, իրենց խորշաւոր ներքասակողմերու կրկնահռունաց մէջ . կենդանեաց վերայ, իրենց գնդերական ներգործից հիւսուածքին մէջ երբեմն մթնոլորտաին մէջ կը պայթեցնէ շանմը, ջրոյ թաթառը և մրրիկները . . . : Կունեզէն ավելիները չեն ներգործեր միայն մարմնոց աշխարհին վերայ, և ու սահմանուած են մի միայն մարմինները տարրալութելու և վերաբաղադրելու . սննոց արգասիքներն չեն միայն երկրի ծոցէն գուրս քաշել անկօց նուրբ բողբոնները, պարզել աերեւոց մէջ կանանչնիւթը, գեղազարդել անուշոքը ծաղիկները, կամ վերակրինել հազարաւոր անդամ արեգական պատկերը ուեաց համայարար բաղման մէջ եւ մարգագետնինու բաղուններուն վերայ, որք հողմի թեթեւ շունչէն կրխանարհին, այլ երկնից լցուր իւր տեւողութեան եւ պայծառաւթեան տարրեր աստիճաններուն նայելով խորհրդաւոր հաղորդակցութիւն մի ունի ներքին մարդոցն հետ, նորա կարողութեանց առաւել կամ նուազ զարթման հետ և խառնուածքի զուարթ կամ մելամաղացոյին հանգամանաց հետ . այս խորհրդաւոր հաղորդակցութիւնն է, զոր նախնին Պինիսս այս խօսքերով կը բացատրէ . “Cœli tristitiani discutit sol, et humani nubila animi serenat . . . Արեգակը կը գործակէ Երկնից Դիրո-Եկանը և կը շրու-է այն ամպերը, որոնք հարտկային սիրու կը մը ագնեն .

ՄԱՐԴՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՎԻԿԻ ՄԱՐԴ

(Հարանակութիւն, տես թիւ 12. 1876.)

2. - Արեան լլջան. - Արովշեաւեւ մարմնոյն զանազան մասերը արեամբ կը պահեն իրենց կենդանութիւնը. հետեւաբար անհրաժեշտ կարեւոր է արեան նոյն մասանց մէջ տարածուիլն. բայց այսու արիւնն եւս իւր կենդանութիւնը կարսնցնելով հարկ կը լինի վերստին դառնալ գէպ ՚ի սիրտը և թոքերը՝ թթուիլ կամ կենդանանալու համար. այս շրջանը զօր արիւնը կանոնաւոր ընթացքով մը կը կատարէ մարմնոյն ամեն մասանց և սրտին ու թոքերուն մէջ. կըսուի՛ Արեան լլջան:

Արեան և անոր շրջանի կեդրանը սիրանէ, որ կուրծքի խոռոչն և զուքերուն մէջ տեղը, շնչերակներու և երակներու միջոցաւ մարմնոյն ամեն մասանց հետ հաղորդակցուած է :

Սիրալ խոռոչաւոր մկունքնէ, բռան մէծութեամբ անկաննն եւ գլուխվայր կոնի ձեւ, որոյ ստորին ծայրը գէպ ՚ի ձախ դառնալով Աւագաստի փայ կը հանդի, իսկ վերին ծայրը արեան բազմաթիւ խողովակներուն կը հաղորդուի Արտաքին երեսը ոզօրկ և միշտ ջրային պարաբա հիւթալ մը թացուած է. իսկ ներքսակողմը չորս խոռոչներու բաժնուած Աջ ու Ձախ նախախորշ և Աջ ու Ձախ վարի-խորշ, որք մասնաւոր թաղանթներով իրարմէ կ'անջատուին : Աջակողմեան նախախորշին հետ հաղորդուած են Երակները, բարակ և կապուտագոյն թաղանթէ խողովակներ, որք մարմնոյն չորս կողմի մեռած արիւնը գէպ ՚ի սոյն խորշը կ'առաջնորդէն. վասն վե արիւնը մարմնոյն մէջ

տարածուած ատեն առաւել քանակութեամբ րոբակածնի հետ իսռնը և լովլի մեռնի կամ կ'անկենդանանայ, մութ կարմիր գոյն մը կ'առնէ, զընտակները կը նուազին և անկարող կը լինի մարմնոյն կենդանական շարժումն պատճառելու. ուստի գէպ ՚ի սիրտը վերստանալով, թոքերուն մէջ շնչառութեամբ թթուածնի հետ կը խառնակ և վերստին իւր կենդանութիւնը կըստանայ: Իսկ Զախակողմեան վարի խորշին հետ հաղորդուած են Ենչերակները, որք լոյն ձգակոն կորմիր թաղանթէ խողովակներ են և ծայրերը անհամար ճիւղերու բաժնուելով մարմնոյն ամեն կողմը կը ցրուին: Ասոնց ոպաշտոնն է նոյն խորշին մէջ ժողովաւած կենդաննի արիւնը մարմնոյն մէջ տարածել:

Խնչպէս վերը յիշեցինք, կաթի անօթները Աղեաց չորս կողմերէն մերն գական հիւթը ծծելով կուրծքի ճամբար կը թափեն ձախ ուստի գլուխաւոր երակին մէջ, որ անկենդան արիւնը գէպ ՚ի սիրտը կը տանի. այս հիւթն եւս նոյն արեան հետ խառնուելով կ'երթաց սրտի Աջակողմեան նախախորշը, անախ վարի խորշը իջնալէն յետոյ թոքային շնչերակներուն միջոցաւ թոքերը կը հանի, ուր կը թթուի և կը կենդանանայ և առդա թոքային երակներով վերստին գէպ ՚ի սիրտը կը դառնայ և Զախակողմեան նախախորշը կը թափի, այն անդէն եւս նոյն կողմի վարի խորշը իջնալով շնչերակաց և անոնց անհամար ճիւղերուն միջոցաւ մարմնոյն մէջ կը տարածուի, ահա այս ատեն մարմնոյն կարեւոր մասերը մը նալով անոր հետ կը միանան. իսկ մեռած արիւնը վերստին ձախ ուստի երակին միջոցաւ նոր ընդունուած սրնընդական հիւթերու հետ կը խառնուի և գէպ ՚ի սիրտը դառնալով նոր

շրջան մը կը սկսի : Արեւան՝ որտին ու թոքերուն մէջ ըր ոծ շրջանը փոքր, իսկ սրտին և մարմարին միւս մասանց մէջ ըրտծը Մէծ շրջան կ'անուանի : Այս եւս գիտնալ պէտք է, որ արեւան շրջանի կանոնաւորութիւնը՝ վայրի ենական արագութեամբ յաջորդաբար սրբուի խորշերուն և անօթեերուն միունքէ թելերու միջոցաւ ամիսովուելովն ու թունալովը և ամեն մէկ խորշի դրանակներուն բացուելովն ու փակուելովը կը պահուի, այնպէս որ մի խորշի սեղ մուելովն՝ մէջը գանուած արիւնը վարի գռնակը բանալով ելած տանեն վերի գռնակէն նոր արիւնը գալով նոյն գռնակը կը փակէ, որպէս զի արիւնը իւրուղութենէն ցարենաց յետ գառնալ, այսպէս յաջորդաբար կը կատարուի նաեւ միւս խորշերուն մէջ :

Յ. — Ենչառ-իւն. — Ենչառութիւնը գործարանաւոր մարմար կեանքը պահելու ամենասկարեւոր միջոցն է, որով ներքին կենսական կարողութիւնը յաջորդական նորոգութեամբ և մըթնողորտի մէջ տարածուած թթուածնի դօրութեամբ յարատեւութիւն կ'ըստանան և առանց որոյ մահը կը աիրէ կենաց փոխարէն, ուր որ կեանք կայ, այն տեղ օդոյ գոյութիւնը անհրաժեշտէ, ուր օդ չկայ, այն տեղ ամեն գործարանաւոր մարմինք շնչառապառ կը մեռանին և կ'ապականին :

Ենչառութեան գործարանք են թուերն և Ենչառ-իւնը :

Թուերը՝ իրանի վերի կողմը, կուրծքի խոռոչին մէջ Սրտի աջ ու ձախ կողմը կախուած սպիտանման երկու մարմիններ են, արտաքուստ նուրբ կուրծքի թաղանթով շրջապատուած և ՚ի ներքուստ անթիւ անհամար բը շիներով կամ ծակաբներով. ուր կը վերջանան շնչառեր նուրբ խողափակներն, այս ծակափներուն մէջ կը հա-

ւարուի մեռած արիւնը օդոյ ներգործութեան ենթարկուելու համար Թուքերը վերի կողմէն ծառի ողէս ձիւզուցեալ Ենչառիողին հետ կը միանան և Սրտին հետ՝ արիւնը տանող և բերող անօթներով հաղորդակցութեան մէջ են :

Ենչառ-իւնը, որ օդը թոքերուն մէջ կ'առաջնորդէ, որկարին առջեւի կողմը և անոր հետ կցուած, պարզ, փողաձեւ, կոճկէ օլոկներով և կոչւց նման թաղանթով կազմուած է : Սորու վերի բերանը՝ Գորսին կըսոյ ծածկոց մի կայ, որ կ'արդիկէ կերակութեերով շնչափողին մէջ իջնալու, ապա թէ աշկուախութեամբ հազու և երբեմն իսկ մեծամեծ վոտագներու տեղի կ'ունենան, իսկ վարի կողմէն երկու զինաւոր ճիւղերու բաժնուելով երկրորդական մանր բազմաթիւ ճիւղերով թոքերուն կը հաղորդաւի :

Ենչառութիւնը երկու կերպով կը կատարուի ներշնչութեամբ և արտաշնչութեամբ, ներշնչմամբ արտաքին օդը կուրծքի խոռոչին մէջ ընդունուելով, Առագաստը կ'ամփոփի, և կուրծքի խոռոչը, կողերն ու թոքերը կը տարածուին օդոյ գորութեամբ, իսկ արտաշնչման ատեն Առագաստը թուենալով գէպ ՚ի վեր գմբեթարդ ձեւ մը կ'առնէ և կողերն ու թոքերը ամիսութուելով կուրծքի խոռոչը կը փոքրիանայ :

Զմեղ շրջապատող օդը զինուած երկու տեսակ գաղերէ կը բազկանաց՝ Ալուածնէ և բորակածնէ, այն համեմատութեամբ որ 100 մաս օդին մէջ 21 մասը թթուածին և 79 մասը բորակածին է, ասոնց հետ սովորաբար խառն կը գտնուեն սակաւ ինչ Ածիածնին և ուրիշ հեղիսային նիւթոց գոլորշին : Թթուածինը արեւան կենդանութիւն կը պատճառէ . իսկ բորակածին է :

Նը միմիայն թթուածնի զրութիւնը շափաւորելու կը ծառայէ : Երբ արտօքին օդը քթով կամ քերնով ներշնչուելով շնչափողն թոքերուն կը համարի, թթուածնին կը զառաւի և ծակտեաց մէջէն անցնող ածխածնով յագեցեալ ապականուած և մթագոյն արեսն վրայ ներգործելով, զայն կը կենդանոցնէ կարմագոյն գործելով, իսկ ածխածնին՝ բորակածնին հետ արտաշնչութեամբ գուրա կ'արտաքսուի, այսպէս անդադար շարունակուելով իւրաքանչիւր շունչի տուր և առութեան ժամանակ, վասն զի մի կողմէն անցնող հատ ապականուած արիւնը թոքերուն մէջ գալով նորոգուելու համար թթուածնի կը կարօտի : Խւրաքանչիւր ներշնչմամբ կամ արտաշնչմամբ ընդունուած կամ արտաքսուած օդոյ քանակութիւնն է 555 խոր . հորիւրորդումէգը . շտիւհաս մարդիկ հաստրակորէն մէկ վայրկենի մէջ 46 անդամ կը շնչեն . ուստի կը հետեւի թէ մէկ վայրկենի մէջ գրեթէ 5 լիտր օդ կը շնչուի . մէկ ժամու մէջ 330 լիտր և մէկ աւուր մէջ 7-8 խորանարդ մէթր :

Թէ բորակածնն և թէ Ածխածնն գալեր շնչառութեան վնասակար լինելով կենդանեաց մահ կը պատճառուենի Այս գալերու յաւաջ բերած վտանգներէն ազատ մնալու համար միշտ թթուածի հարկաւոր եղած քանակութիւնը պահել անհրամեշտ է : Փակուած, անմաքուր, ձախնային տեղեր, խրաքանչիւր անձի համար 8 խորանարդ մէթրէ նուռաղ տարածութեամբ սենեակներ, երկար ժամանակ գոց մնացած վտանգ միշտ կենաց վնասակար են և բազմաթիւ օրինակներով տեսնուած են ասոնց մահառիթ վտանգները . ինչպէս վերը մարդոյ համար միշտեցաւ որ մի կողմէն թթուածնը ներս ընդունուելով միմիայն բորակածնն ու

Ածխածնը դուրս կելլան, այսպէս գիտնալու է նաև բոլը կենդանեաց համար Այս աեզէն պիտի կարծուի որ մի կողմէն թթուածնը նուազելով վնասակար գալերը կ'առաւելուն և անշուշտ օր մի պէտք է թթուածնը սպառի . սակայն հարկ է գիտնալ որ Ցնկերն ալ, կենդանեաց հակառակ, արեգակի ներդործութեամբ բորակածնն և Ածխածնն ծծելով թթուածնը կ'արտաշընչէն, որով միշտ սոյն գալերու համեմատութիւնը կը պահուի :

Ցնչառութեան գործարանաց միջացաւ յուած կը գան նու և Զայլը, Հառաչանչը, Յօրաշումն, Ցիծաղը, Փակեանն, և այլն :

Ցնչափողին մէջ եղած օդը երբ յանկարծակի Գլսուէն դուրս հանենք Զայլը կը գյանայ, ինչպէս կը պատահի երբ հով մը փարբիկ ծակէ մը անցնելու ըլլայ : Գլսոի բացուածքին համեմատ ձայնը հաստ կոմքարակ, ուժզին կամ մեզմ կ'ըլլայ : Այս կերպ է ահա բոլոր թոքաւոր կենդանեաց ձայնը . բայց մոլոց հագագին կատարեալ կազմուածքէն . բերիի խոսովն ամուր ու կոր ձեւէն, լեզուին և շրթունքներուն արտգ շարժմանէն կը ձեւանաց այն յօդաւորութիւնը, որ լըլը կամ բարբառ կ'անուանի, որով մարդ կարող է իւր ամեն խորհուրդը ուրիշն յայտնել :

Հառաչանչը երկար և խորին շնչառութիւն մ'է, որով օդոյ մեծ քանակութիւն մը կը ներշնչուի և կ'արտաշնչուի : Յօրաշումնը աւելի խորին շնչառութիւն մ'է, որոյ հետ ծնունդներն եւ բերնի խոտոց ակամայ ջլագուում մը կը կրեն :

Ցիծաղը ընդհատեալ շնչառութեան փարբիկ շարժմանց յաջորդութիւնն է, առաւել կամ նուռաղ տեւական, որը լատ մեծի մասին Առագաստի սաստիկ

ամփոխմամբ յառաջ կը գայ: Այսպէս են նաև Փանքնը, Հալլ և Հեծիանը, որք նցնապէս առաւել կամ նուազ չըն: Ճառութեան ընդհատեալ կերպով կատարուելով կը ձեւանան:

Վերոդրեալ երեք գործողութեանց Մարտզութեան, Արեան շրջանի եւ Ենչառութեան միջոցաւ կատարուելով Սնունդը, մարդը կարող է պահպանել առ ժամանակ մի իւր կեանքը: Ասոնք կենաց էական պայմաններն ընկըլ միոյն ամենափոքր թերութիւնն միւսներուն ևս վեսսարերէ, առանց օրինաւորապէս մորտզութեան և շընչառութեան Արեան շրջանը իւր իոննաւորութիւնէն կը խոտորի, առանց Արեան շրջանի՝ Մարտզութիւնն ու շնչառութիւնը խոպառ անօդուտ կը լինին եւ կեանքը չկընար իւր գոյութիւնը պահպանել: Այսու ամենացնիւ թէ և կենաց սոյն երեք գլխաւոր գործողութիւններն անթերի կատարեն իրենց պաշտօնը, թէ և մարդ օրինաւորապէս սնանի և ասպի, բայց գարձեալ չէ կարող մշտնչնապէս կեանք ունենալ, վասն զի ներքին գործարանները միշտ գործելով հետզհետէ կաւրուին, արեան շրջանը կը սրի օր ըստ օրէ գանդաղիլ, կենդանութիւնը նըւազիլ եւ վերջապէս խոպառ անգուժութիւն մը տիրելով մարմնոյ վրայ մահը կը համար և մարմինը կը լուծուի Աւստի մարդոյ տեսակը աշխարհի վրայ պահելու համար, պէտք է որ մի կողմէն յաջորդաբար նորեր յառաջ գան:

Բ. Տեսակի Յաջորդութիւն.

Աշխարհի վրայ մարդոյ գոյութեան և տեւականութեան գլխաւոր պահածառներէն մին է Տեսակի Յաջորդութիւնը, որով շարունակաբար առա-

լիններէն՝ նցն տեսակի նիւթեր յառաջ գալով իւր սերունդը մշտնչնաւորապէս կը պահուի:

Կենդանեաց մէջ ամենապարզերը կամ ստորինները՝ շղթքաւոր նիւթերէ կը գոյանան բնչպէս են Զբաժինները, ուսանք, ինչպէս Պողիասոդները, իրենց հիններուն կամ ծերերուն վրայ տունկի նման բուննելով անոնցմէ կը զատուին եւ առանձին կենդանիներ կ'ըլլան: շատերը՝ բնչպէս են թռչունները, հաւկմով յառաջ կը գան, իսկ շատերն եւս, այսինքն կաթնասուկենդանիները, ողջ ձագ կը բերեն և իրենց կոմելը կը մէծցնեն մինչեւ որ կարող ըլլան հաստատուն կերտկարութել: Մարդը այս վերջին տեսակին կը վերաբերի:

Պիւֆոն՝ մնեդական աճումն և Տեսակի յաջորդութիւնը կամ ծննդաբերութիւնը բացատրելու համար, մարդոյ մարմինը կ'ընդունի իրեւն ներքին կաղապար մի (moule), որոյ մէջ՝ Սննդեամբ ընդունուած կենդանական մասնիկներ պարունակող նիւթերը տեղայն համեմատ իներքուստ թափանցելով կը տան նմա աճումն ծաւալական, միշտ պահնելով իւր ձեւն: Բայց թէ Բնչ աւեսակ է այն նիւթը, որ թափանցելով կը միանայ մարմնոյն հետ, բնչպիսի զօրութիւն է այն՝ որ կը ներմուծէ սոյն նիւթն մարմնոյ ծակտեաց մէջ: այս հարցմանց լուծումն ստանալու համար, պէտք է նկատել եւ գիտնալ՝ որ բնութեան մէջ կենդանական գործարանաւոր մասունք պարունակող նիւթոց անհունութիւն մի կայ, մարդոյ մնեդեան համար ընդունած նիւթերն գործարանաւոր մարմնոց մասունք են, զորս ծամելով ոչ թէ նոցա կենդանութիւնը կ'եղծանեմք, այլ միոյն փարք մասերու կը բաժնեմք, այս նիւթերը կը անել:

առյ. ինչպէս տեսուիք Աննդեան վերաբերեալ նախարգ գլուխն մէջ, ներքին գործարանոց միջացու կը լուծուին կը զատուին եւ անկենդան ու անօդուտ մասերն գուրս ձգուելով միմիայն կենդանիան մասերէն ճաճացը կը կաղմուի, որ արեան հետ խառնուելով մարմնոյն ամեն կողմը կը տարածուի. այս ժամանակ խրաբանչիւր մասնիկ իւր համառեռ նիւթին մէջ կանոնաւոր և համեմատական օրէնքով և ներքին օրոշ զօրութեամբ մը թափանցելով, մարմնոյն ծաւալը հետզհետէ կ'առաւելու և իւր զանազան մասերն իրենց կտարելութիւնը կը ստանան: Խոկ այն թափանցիչ զօրութիւնը ներքին լինելով կարելի չէ ուղղակի նորավայր գաղափար մի ստանալ, վասն զի մէր մոտաց մէջ միայն այն իրերն կը գաղափարուին, զօրս կընծայէ մեզ տեսաւթիւնը, այսու տեսնայնիւ ոսյն զօրութիւնէ յառաջ եկած արգեամբք կ'իմանամբ նորա գոյութիւնը և կարող եմք ասէլ, որ սա եւս ծանրութեան նման զօրութիւնն մ' է, ինչպէս ծանրութեան կամ ձգողաւթեան զօրութիւնը կը թափանցէ մարմնոց մը ամեն մասնկաց մէջ նոյնպէս և ասին ներքուստ կը թափանցէ մարմնոյն բոլոր մասանց և հիւլէից մէջ, իւր հետ ներմուծելով նա և կտրեւոր նիւթեին:

Մի և նոյն նիւթերն և զօրութիւնը կը ծառայեն նա և Տեսակի յաջորդութեան: Երբ մարմնոյն ծաւալը օր ըստ օրէ աւելնալով ամենն կտարելութեան կը հասնի, այնուհետեւ սննդական մասերը այլ եւս մարմնոյն մէջ չկարենալով թափանցել կը սկսին հաւաքուիլ մի և նոյն զօրութեան ազդեցութեամբ: Եւ օրովհետեւ նոյն մասնիկները՝ մարդոց մարմնոյն զանազան մասերը կաղմելու ծառայող հիւլէներն են, ուստի խրաբանչիւր հիւլէ իւր

տեսակին պատշաճ տեղոյն մէջ հաստատուելով, սոցա միտութեամբ առաջնոյն նման նոր տեսակիներ կը կաղմակերպին միայն բեղմնաւորութեան կարգութեանը ողբ սեմական կենտրոնի կը կոչուին: Ասոր հաստատուն ապացուց կընաց լինել, որ մանկութեան հաւասակին մէջ տեսակի յառաջ բերումն խիստ սակաւ կամ ամենեւին քվենիր, վասն զի կենդանական հիւլէները տակաւին մարմնոց աճման կը ծառայէն: և նոքա որ այս բնական սկզբան դէմ կը գործէն միշտ տհաս և անզօր կը միան, զայս կը հաստատեն նաև ցեղական նմանողութիւնք, մանկունք սովորաբար իրենց ծնողաց կամ հաւոց նմանութիւնը կը կրեն:

Բեղմնաւորութենէ զինի, որ միայն առն սեպհական է, յիշեալ անտեսանելի կենդանիք կը սկսին հետզհետէ իւրենց աճումն ստանալ իգական սեռի սրբայնին մէջ, ուր միայն կը դանուի աճման ընդարձակ պահարանը հաւ կը թածեւ փամիուշոներով: այս ներքին աճման միջոցը ընդհանրապէս ինն աճու չոփի կը տեւէ, որմէ յետոյ սազնի իւր ամեն կտարելութիւնը և մարդկային կերպաւորութիւնը ընդունած ըլլով յաշնարհ կուգայ և կը սկսի կեանքը:

Մարդոց մարմնոյն Տնկական յատկութիւնները այսքան նկարագրելով: կ'անցնիսք այսուհետեւ դիտել նաև իւր կենդանական մասը, որով գերազանցելով անզգայ և անշարժ Տնկերն, կենդանեաց եւ մանաւանդ անոնցմէ կատարելագուններուն նմանութիւնը կը ստանայ:

(Ծարունակիլու)



ԱՇԽԱՎՐՈՒԹԻՒՆ

ԵՎԼԵԿԻՐԻ

(Հարուսակութիւն . տես թիւ 12. 1876.)

Գողով նկարագրութեանց . ճշմարիտ է թէ մի քանին տկար կերպով ծրագրուած են , գլխաւորաբար կանացը , որոց գերերն ընդհանրապէս ոչինչ էն . բայց Մաւրիտանացւոցն նկարագրութիւնը , թէեւ փոքր ինչ ծաղրաշարժ , խիստ սկզբնական և Շիլֆրի վրձնին արժանի է . Ֆիէստինը՝ բնական է և քաջայարմար . Ֆիէստ նենգութեան և անառակութեան տիպն է , ազնուական դաւադիր մ' է նա , որ իւր փառասիրութիւնը հասարակապետութեան վերարկուին ներքեւ կը ծածկէ . իսկ գաղով Վէրբինայի նըկարագրութեան , սքանչելապէս ծրագրուած է նա , 'ի նա կը տեսնուի ճըշմարիտ հայրենասէրը , պարզ ու անբիծ հասարակապետականը . բացայաց է , որ սոյնօրինակ նկարագրութիւն մը բռնը աշխարհի չ'է կարող հաճելի լինել . բայց այսու եւս նուազ մեծ , գեղեցիկ ու վսեմ չ'է : — Թու հէ արարուածի այն գեղեցիկ տեսարանը կարդան , ուր այն անցաղդողք մարդը , երկաթասիրտն Վէրբինա , նոր Տօմի⁽¹⁾ մը ոտքերն ինեկած է , ուր կ'ըսէ նա . « Եթէ աստ ոիմ առջեւ դրուեր բոլմադակ տիեզերաց թագերն 'ի վարձատրութիւն , անդ դժոխոց բովանդակ չարչարան » բըն 'ի պատիժ , գարձեալ մահկանացուի մը առջեւ ծունկերս ըսպիտի « խոնարհեցնէի . Ֆիէստ , զայնս զուածինն քու առջեւ կը խոնարհեցը . նեմ . . . 'ի բայց թուղարյադ ծիրանին » ,

(1) Տօմի . Վենետիկի և Ճենովյան հասարակապետութեան նախագահին ափազոն էր .

և ապա թուղարյադին թէ պոռոտախօսութիւն մ' է այս , կամ թէ , Անսակնիկի էմիլիա Կալոդդիին հօր մի ալօս ընդօրինակութիւնը :

Ֆիէստի Դաստիր-Եկանը , թէեւ ըստ մեզ խորդառանքն ու սէրէն շատ բարձր է , սակայն այս վերջինէն , որ կատարելապէս Անսակնիկի տեսուկէն է , խիստ նուազ ազդեցութիւն ըրաւ ժողովրդեան վերայ . պատճառն ամենապարզ է . արտասուալից թատրերգութիւնը գերմանական ժողովրդեան ճաշակին միշտ հաճելի եղած է և միշտ պիտի լինի , քան խօրդաւանաց թատրերգութիւնը , բայց յոյսմանէ նորա մէջ Շիլֆր 187 Դարու ազգային ճշգրիտ բարուց նկարագրին եւս ըրած է : Այն ժամանակ մեծ մարածախտին շոփի տպուշ աղնուականներ կային և նախագահին շոփի ապիրատներ : Ծերունի նուազածուին և դեռասափ աղջիսն գերերը , որը սրաազրու ճշմարտութիւն մ' են , հանդիսականաց վերայ այնպիսի խորին տպաւորութիւն մ' ըրին , որ 47 արարուածին մէջ հասարակութեան հեծեծանունները գերասանները հարկադրեցին առ վոյր մի ներկայացումն ընդհանութեան ուստի ոյս թատրերգութիւնը խիստ ժողովրդական մնացած է միշտ :

Երեք մեծ յաջողութիւններէ յետոյ , Շիլֆրի համբաւն այնշափ մեծ էր իբր թատրերագիր հեղինակ , որ ամեն ոք անհամբեր նոր թատրերգութեան մը կը սպասէր եւ թէ նորա ընտրած թատրերգական առարկան գրագիտական գէպք մի կը լինէր : Շիլֆր սակաւ ժամանակէն յետոյ Տօն Գարլոսի մի քանի տեսարանները Թալլ ու Ռէնի մէջ հրատարակեց , նա զայնս կարդացած էր Հէս Տարմէզատի Լանդիկավի արքունեաց մէջ 'ի ներկայութեան Վէյմարի դքսին , որ սքանչանալով նորա տաղանդին վերայ , խորհրդականի

տիտղոս տուաւ նմա , և յորդորեց այս
նշանաւոր գործն ընդ փյօթ ՚ի կատար
հանել : Բայց Շիլէր այն ժամանակ սի-
րոյ բուռն թախծութեան մը ճարակ
եղած էր : Իւր բարեկամաց միոյն կնոջ
սասակապէս սիրահարած էր , որոյ հե-
տեւեցաւ ՚ի Տրէզա , բայց անկեղծ
ու առարինի մարդ մը գիտէ սիրոյ
յաղթանակել , երբ պատիւն ու պար-
տաւորութիւնը զայն հրամայենն նոյնն
ըրաւ և Շիլէր , իւր առաքինութիւնը
երկարատեւ . և . գմնդակ պատերազմէ
մը յետոյ յաղթանակեց և ամբողջ
տարի մը մէն միայնակ գիւղական փաք-
րիկ տան մը մէջ առանձնացաւ , ուր
նոր եռանդեամբ քնարերգական բա-
նաստեղծութեան նուիրեց իւր անձը .
Հրաժարո՞ն և Պատերազմ անուամբ գե-
ղօններուն մէջ զինքն յուղող վշտագին
զգացումներն կ'արտայայտէ : Այս խո-
րին առանձնութեան մէջ լրացուց նաև
Տօն Գարլոսը , որ 1787 ին տպագրե-
ցաւ ՚ի Լէյցցիկ և համարեաթէ անմիշ
չափէս ներկայացուեցաւ : Այս գործն
ամենամեծ և ամենաօրինաւոր յաջո-
ղութիւն մը ունեցաւ և իւր գլուխ-
գործոյն հռչակեցաւ : Մի և նոյն տար-
ւոյն մէջ ՚ի Վէյմար այն զբսին քոլ-
գնաց , որ երկու տարի յառաջ իրեն
խորհրդականի ախտղոս տուած էր :
Երկար ժամանակէ : ՚ի վեր Վէյմար
Գերմանիոյ ամենանշանաւոր մարդ կանց
քնակատեղին եղած էր : Շիլէր աստ-
նախ Վիելանի և Հերտերի (1) բարեկա-
մացաւ և յետ ժամանակաց Կէօթէի :
Վիելան խնդրեց իրմէ , որ իւր հրա-
տարակած Գերմանական Հերմէս օրագրին
համար աշխատի , որոյ մէջ Շիլէր Աւ-

դուածք Յունաց , Արուեստ և ուրիշ մի
քանի յօդուածներ հրատարակեց , որը
մեծապէս նպաստեցին այն օրագրի
ստացած անմիջական փառաւոր համ-
բաւոյն :

Շիլէր 1788 տարին գրեթէ ամէ
բոլղապէս Դիւտուղդատ անցուց , ուր
զառաջինն տեսաւ զկէօթէ , որ իւր
իստալիս ըրած ճանապարհորդութե-
նէն նոր վերագարձած էր : Նոյնպէս
նաեւ Լանժանֆէլի ընտանեաց մէջ
մուտ գտաւ , որոյ հետ երկու տարի
էն յետոյ աւելի ներքին կապերով մի-
ացաւ : Մարդ հազիւ կարող է ըմբռու-
նել թէ Շիլէր այսպիսի թափառա-
կան կենաց մէջ ինչպէս կարողացաւ
այնչափ բազմաթիւ գործեր աշխատա-
սիրել , սրովիշետեւ այս ժամանակի ոչ
միայն Սորբին-նահանգաց անհայտութեան պար-
մունի-նը և Երե-ելի ապագամբութեանց ու-
ժառադրութեանց հաստածոյնին առաջին
հատորը հրատարակեց , այլ և պատ-
մական և քննադատական յոգնաթիւ
փորձեր , զօրս օրագրաց կամ հաւա-
քածոյց մէջ ՚ի լցու ընծայեց : Այսու-
ամենայնիւ զը գագրեցաւ Թալիկ և Գեր-
մանական Հերմէս օրագրաց համար աշ-
խատելէ , որոյ մէջ Տօն Գարլոսի վկայ
նամակներ կան : Վերոյիշեալ երկասի-
րութեանց ամենանշանաւորնէ արդա-
րեւ Սորբին-նահանգաց անհայտութեան պար-
մունի-նը : “ Դժուարին է , կ'ըսէ իրա-
ւաբան կենսագիր մը , այս պատմու-
թէեան մէջ ճանաչել հեղինակն , որ
“ երեւակայութեան սոսկալի սսաւմ
“ մ' ըրած է իւր Աւալաշից թափեր-
“ գութեան մէջ ” : Այս պատմութեան
իսկական արժանիքը չեմք կամիր աստ-
քննադատել . բայց անշուշտ եմք , որ
եթէ Շիլէր երբեմն կողմանակութիւն
կը ցացնէ : պէտք է զայն մարդկային
տկարութեան վերագրել և ոչ երեկը
դիտաւորութեան : Աս հաւասար որը-

(1) Հերտեր , բրուսիացիք բազմադիր գիտնակա-
նը ծնաւ 1744 ին և մեռաւ 1803 ին : Աս աստ-
ուածաբանութեան , բանասիրութեան , իմաստա-
սիրութեան , հետխօսութեան , պատմութեան :

տմուռաթեամբ կը պարսաւէ բողքականաց և կաթոլիկաց շափաղանցութիւնները . անտարբեր կերպով կը գովէ ինչ որ երկուսահեք գովելի կ'երեւի իրեն . վայելը թեամբ եւ շափով կը դատէ , առանց նախատանաց և պուտախօսութեան : Վերջապէս Եիլէլքը բովանդակ տաղանդը խորհրդածութեանց , ընդհանուր պատկերաց և կենդանի նկարագրութեանց մէջ կը փայլի , որոց մի քանին օրինակներ են . Մինչեւ Սոորին-Նահանգաց խնամակալուհւոյն վերադարձը կը գրէ և անդ կը դադրի : Աւստիվ վերնագիրը կատարեալ չէ և մարդ չէ կարող ըմբռնել թէ ինչպէս այսօրինակ ձեռնարկութիւն մը թերակատար թողւց , որ ըստ ամենայնի նսրա երեւակայութեան հաճելի պէտք է լիներ , Կարելի է թէ իւր յօժար կամօքը դադրած էր և կամ յուսահատած էր , նկատելով որ այնուհետեւ իւր պատմագրէ մը ապասածին լիտվին չի պիտօն կարողանաց պատասանել : Եիլէլքը պատմութիւնը խիստ բարձր տեսակէտով մը կը նկատէր , ըստ իւր , պատմութիւնը բովանդակ բարսցական աշխարհը կ'ամփոփէր : Զը կայ անհատ մը , որ ը կարենայ նորա մէջ օգտաւէտ դասեր գտնել . . . : Պատմութեան մէջ կը տեսնուի թէ ինչպէս ներկայ ժամանակներից ախտածութաց դարերէնիւր բովանդակ մանրամասնութիւններով պարաստուած և ծնունդ տած առած է . . . : Մեր ստացած նիւթական վայելը թիւնները , մարդկային ազգի գեղակատարելութիւնը բած յառաջադիմութիւնները մեր հարց գործերն են . . . : Ուստի մեք եւս կը պարտիմք այս բարիներն անաղարտ պահպանել և զայնը նորերով հանդերձ յաջորդ սերընդեան աւսանդել :

Այսպէս էին Եիլէլքը պատմու-

թեան մասին ունեցած գաղտփորներն . առանք Ենացի մէջ իւր իմաստաւսկութեան վասելն սկզբնաւորելու առթիւ արտասանած բանախօսութեան մէջ ամփոփուած են , որովհետեւ Կէօժէի թախանձանօք , որ Սարս-Վէյմարի դքսին արքունեաց մէջ խիստ մէծ ազգեցութիւն ունէր , իւս խանը 1789 ին զԵիլէլքը Ենացի համար սարանին մէջ պատմութեան արտաքոյ կարգի գասատու կարգեց : Ահա այս պէս ութը տարւց անհանգիստ եւ յուղեալ կեանքէ մը յետոյ , Եիլէլքը սկսու այնուհետեւ հեշտին և աղահավ կեանք մը վարել : Սակաւ Ժամանակին Լանժանֆէլի օրիորդին հետ ամսւնացաւ , որոց անդրանիկի քորը գրեթէ մի և նայն ժամանակին Եիլէլքի մանկութեան բարեկամ Պ . աը Վոլոզինի հետ ամսւնացաւ :

Այն ժամանակ Եիլէլքի համար նոր գարագլուխ մը սկսու . նոյն ժամանակ իսմիջոցին մէջ կրսկի նաեւ իւր մէծ համբաւոյն թուականը , Անհաւատակի եռանդեամբ աշխատութեան նուիրեց իւր անձը : Իւր բարձր հանճարով զինքն ըջապատուցաց հմտութիւններէն և գիտողութիւններէն օգուտ քաղեց և նոյն ժամանակ Ենացի համալսարանը Գերմանիոյ գլխաւոր գիտուոց մի փայլուն կաճառը կը ներկայացնէր : Վերստին սկսու յունարէն ուսանիլ եւ Եսքիլսուէն (1) ու Եւրիպիդէսէն (2) բաղնաթիւ թարգմանութիւններ ըրաւ : Ենէականի մի թարգմանութիւննեւս սկսու . բայց թերակատար թողուց : Այս ժամանակամիջոցին նորա

(1) Եսքիլս , յունական ողբերգութեան հայրը . 525 ին (Ք . Ա .) Աթէնքի մէջ ծնաւ և 456 ին մեռու .

(2) Եւրիպիդէս : հունակառ քայն ողբերգակ բանաստեղծ : ծնաւ ի Սալամինա 480 ին Ք . Ա . և մեռու 407 ին :

Հրատարակութեանց մէջ ամենանշունաւորն է պատմութեան վրայ բառձը բանախօսութիւնը, զորմէ արդէն ՚ի վերեւ խօսեցանք . այս հատուածը, որ միայն քանիլութը երեսէ կը բաղկանայ, արտաքրայ կարգի աւելնով մը գրուած է . բնաւ փափաքելու բան մի չը թողուր և մէծ հոչակ ստացած է ոչ միայն իւր փայլուն ոճովը, այլ և իւր մէջ ամենանօթ բաղմաթիւ միտքերն իսկ կը գոհացնէր : Եկլէր այս ընդհանուր ձգառումէն ազատ չը մնաց . այլ ընդհակառակն այս նոր ասպարիզին մէջ խորամիսեցաւ իւր բոլոր եռանշգեամբ :

Եկլէր այս միջոցին սկսաւ նաեւ Երիտասաներր Դարեն մինչեւ արդի ժամանակն եղած յշապահարանաց ընդհանուր հաւաքածոյն : Այս գործոյն Ա. Հատորին կէուը միայն թարգմանեց ինքն . Բաւլոս և Վոլգման յանուն իւր շարունակեցին զայն : Համարեամ թէ մի և նոյն ժամանակ սկսաւ Երաշտես վերնագրով վէտ մը հրատարակել եւ կիսակատար թողուց . այսու ամենայնիւ բաղմիցս տպագրեցաւ : Այս վէտը, թէ և թերակատար, չափազմնց անցագութեամբ կարգացաւեցաւ և ուրիշ հեղինակոց կողմէն նորա բազմամիւ շարունակութիւնները յերեւան եկան :

Գմուարին է ըմբռնել թէ Եկլէր իւր բազմագիմի զբաղմոնց մէջ ի՞նչ պէս կարողացաւ պատմութեան և իմաստափրութեան ուսմանց նուիրելու ժամանակ գտնել :

Այս ժամանակ Քանդի⁽¹⁾ գրուածները Գերմանիոյ մէջ տեսակ մը յե-

զափախառ թիւն յարուցած էին . իւր բաղմաթիւ աշակերտաց մեկնութիւնները, ընդլայնումները, ամփափումները և ասոնցմէ հետեւած բուռն վիճաբանութիւնները՝ խմբում մը յառաջ բերին, որ մինչ ցայն վայր այս ուռամնց անծանօթ բաղմաթիւ միտքերն իսկ կը գոհացնէր : Եկլէր այս ընդհանուր ձգառումէն ազատ չը մնաց . այլ ընդհակառակն այս նոր ասպարիզին մէջ խորամիսեցաւ իւր բոլոր եռանշգեամբ : Վերջապէս Եկլէր 1790 ին . 1791 ապրույ պինանց պապմական օրացոյցին մէջ ի՞ւ Երիտասան պապերաց պատմութիւններ եւս հրատարակեց : Այս պատմական երկրորդ գործոյն յաջողութիւնը մէծ եղաւ և ցարդ անեղծ մնաց : Եկլէր ոչ ուրիշ աւելի խանդ ու աւիւն գործածած էր : Իւր պատմկերները լաւագէս յօրինուած են, իւր կենդանազիրները ընդարձակօրէննկարուածնը կարտգրութիւններն իրենց ամենափոքր մանրամանութեանց մէջ իսկ օգտակար են : Իւր ոճը, թէ եւ իսկապէս բարձր, սակայն պարզ և բնական է . և Գերմանացիք իրաւունք ունին Երեւանական պապերացը իրենց ազգային գրականութեան դասական գլուխոր գործոց շաբթը գասել :

Բայց այսըսփի անընդհատ աշխատութիւնները, այսըսփի յարտաեւ և բուռն ուսումները Եկլէրի առողջութիւնը խանդարեցին : 1791 ին կու ըքքէ վոտանդաւոր հիւանդութենէ մը բըռնուեցաւ և առաջին կարգի բժշկաց փութաշան խնամներն չը կարացին նորա հիւանդութեան սաստկութեան յաղթել . Եկլէր դեռ չը մեռած՝ յանհարծ իւր մահուան գումը բոլոր Գերմանիոյ մէջ տարածուեցաւ եւ ամեն-

(1) Եմմանուէլ Քանդ, Գերմանացի հաշակառը իմաստակը . 1724 ին ծնաւ ՚ի քէանիկասկըրկ . Սա եղաւ Գերմանիոյ մէջ Ակադեմիան կոչուած իմաստափրական գորոցին հիմնադիրը : Քէանիկապերկի համալարանին մէջ շարունակ տասն և հինգ տարի պարզ կրկնիչ մ' էր . 1766 ին փոխ—մանգարանապետ անուանեցաւ և 1770 ին տրամաբան նութեան և բնագանցութեան ամժոռ ստացաւ, զոր մինչեւ իւր մահը (1804) պահպանեց : Քանդ միայն խորին բնագանցագէտ մը չէր . այլ գրեթէ մարդկային բավանդակ գիտութեանց հմտութիւն

ունէր : Սա ընդհանուր բնագիտութեան և աստղագիտութեան վայր բաղմաթիւ ընտիր ճառեր հրատարակեց :

ուրեմբ սաստիկ ցաւ պատճառ եց : Եիլ
Եր յամենուստէք սիրոյ անհամեմատ
առհաւատչեայներ ընդունեց : Տանիւ
մարքայիթ թագաւորը և 0/իւսդ պուրկ
ժամանդ իշխանը , որ այն ժամանակ
Հուդէյնի տիրող գուքն էր , նմա
1000 ական Թալէս (1) ռոճիկ սահման
նեցին . որպէս զի այնուհետեւ շափա-
փազանց աշխատութեան մը անձնա-
տուր չը լինի : Ելլէր տակաւ առ տա-
կաւ ասպաքինեցաւ , բայց երբէք չա-
ռոջացաւ : Հասարակային դասերէ
արգիլեցին և խորհուրդ առ ին նմա ,
որ ամեն տեսակ աշխատութիւններէ
հրաժարի : Երկոր ժամանակէ ՚ի վեր
մեծ փսփառ կը յայտնէր իւր ծնազրը
և իւր նախկին բարեկամները տեսնե-
լու համար : Աւստի 1792ին վերջը իւր
ծննդեան վայրերը ճանապ որհորդելու
ձեռնարկեց և անդ տարւոյ մը շափ
մեաց : Եգուդկորափ մօա լիներով
Վեւրդէ մակերկի դքանի ազատանաց
գիր մը գրեց , որ իւր յանցանաց նե-
րէ և իւր բարեկամներն երթալ տես-
նելու թոյլուութիւն խնդրեց : Դուք-
սը բնաւ չը պատասխանեց , բայց առ
նուզլուկի իմացուց , որ եթէ Եգուդ-
կորտ գալ ուղէ , իշխանը աչք պիտի
գոցէ իւր ներկայութեան : Ելլէր գոհ
եղաւ այս թոյլուութիւնէն և անտի օ-
գուտ քաղեց : Սակաւ ժամանակէն
դուքը վախճանեցաւ . Ելլէր անիկ զծ
վլուակրութիւն յայտնեց : Նախը նախ-
ին բարերարին վրայ միմիսյն պատ-
կաւանօք եւ երախտագիտութեամբ
խօսած էր :

Յաջորդ տարին Ենա վերադարձաւ
և անդ ձեռնարկեց իւր բոլոր քննա-
դատական և իմաստասիրական աշխա-
տութեանց . յաջորդաբար բազմաթիւ
ձառներ հրատարակեց , որոց ամենա-

նշանաւորն է յատակ ու շարժիչ ոճոց
վերայ գրած ձառը . իւր իմաստափ-
րութեան մոսին ունեցած բուռն ձա-
շոկը , զայն առ ժամանակ մի բանաս-
տեղծութենէ հետ ացուցին , ընդ փայթ
իւր այս երթատասարդութեան բարեկա-
մուհեցին , իւր կենաց լիներու հետյն վե-
րադարձաւ : Քողարիկալ պատիլէ , Գողա-
րիր և իւնչ , Բանչ հաւատոյ , Բանչ ցու-
րոց , Բաժակունի երիլի , և այլն . ասոնք
ամենիքն ևս այս ժամանակամիջոցին կը
վերաբերին և յատակութեան ու վա-
յելութեան գլուխ - գործոցներ են :
Ելլէր ուրիշ բանաստեղծական գոր-
ծեր ևս ունի , որք առ անց անձնական
դգացումներ յայտնելու՝ նոյնագէս հր-
բապուրիչ և վայելուչ են : Այն ժա-
մանակ Գերմանիոյ մէջ նորածեւու-
թիւն մ' եղած էր հրաշալի կամ տա-
պեատական դիաց վերայ վէպեր եւ
պարերգութիւններ յօրինել . Պիւրմէ (1)
զառաջնութիւններ ըրաւ գրականու-
թեան այս ձիւզը , որ մեծ նմանու-
թիւն ունի Եւրոպացի մէջ նախնեաց
նմանութիւններ յառաջ ծագումն առ
ուած բանաստեղծութեան և որ յո-
զովուրդի ճաշակինքն յարմարելով՝ իւր
յաջուղութիւնը երաշխաւորեց : Կէօթէ
ևս բազմաթիւ նշանաւոր վէպեր յօ-
րինեց , բայց Ելլէր գրականութեան
այս ձիւզին մէջ ամենէն աւելի յաջո-
ղեցաւ : Սուլուկը , Վէրտէնդուրիլի կողեր-
հարդ իրմը , Զեւուցը , Դարբնոցը , Բոլի-
լարի մասնին , Վիշապանարպը , Հապալուրիլի
իրմը , պարզ ու հեշտին վէպեր են , լժէ
եւ բանաստեղծական գոյներով զար-
դարուած :

Վերջապէս տասն երկու տարւոյ
ընդմիջումէ մը յետոց , Ելլէր թատ-
րերգութեան ասպարէզը վերադար-

(1) Պիւրմէ , Գերմանացի բանաստեղծ (1748—
1794) :

Ճառ : Բայց մեծ փափախութիւն առաջ ած էր , իւր արտահատից եւ սկզբ քանից վերայ ունեցած գաղափարները այլ եւս նոյնը չէին , ոսկայն իւր հանձնորդ զարգացման կատարին հասած էր : Նա կը կամէր , հանգոյն մեծին Շէքուրիի , գերմանական տեսարանին վրայ պատմական թատրոնութիւններ մասնել . այս բանիս համար նախապատիւ համարեց այնպիսի պատմական ժամանակ մը , յօրում անհատք կամ դիւցազունք , որոց գործել տալ կուզէր , աւելի ինքնին կը գտնուէին եւ առ հասարակ իրենց ընդարևոյս ընաւորութեան անձնատառը կը լինէին : Ուստի նա Վալլանսդէնը իւր թատրեր գութեան նիւթ ընտրեց : Ընդ երկար և իւր յատուկ խզմառութեամբը աշխատեցաւ . բաղմից նոյն խէջ իւր ծըրագիրը թալլու կէտին հասաւ , հանդիգած անհամար գժուարութիւններէ : Խրտնելով :

“Ճշմարիտ անձկութիւնը մը կըզգամ , կը դրէր մի բարեկամին , երբ Վալլանսդէն ողբերգութեան վերայ կը մօտածեմ Եթէ կամիմ աշխատութիւնս շարունակել , հարկէ նմա նուրիել առ նուազն կենացս եօմը կամ ութը ամիսները , զոր շատ իրաւունք ունիմ ըստ մախելու և թերեւս արդիւնքը թերակատար գործ մը լինի : Իմ առաջնին թատրերգութիւններս սնրատւական են զիս քաջալերելու : — Այսպիսի ասղարիզի մը մէջ կը մօնիեմ , որ անձանօթէ ինձ , կամ որոյ մէջ գէթ փորձուած չէմ տակաւին , որովհետեւ երեք շրս տարիէ ՚ի վեր բալրումին նոր գլութիւն մը ընդունած եմ” :

Դժուարին էր հաւատալ թէ Շիլէր , որչափ փայթ կը տանէր իւր հետազոտութեանց և տեղէկութեանց ճըշգութեան : Օրինակի համար , նա ուղած էր Վալլանսդէնի աւելորդապաշտ

բնաւորութիւնը և աստղահմայութեան մոլուկիւնը պահպանել , բայց շաւկելով զիտոցածին վերայ խօսիլ , և ըկարծելով որ մոլորակաց ազդեցութեան և աստեղաց վերայ բաւական էր քանի մի տարտամ հատուածներ արտասանել տալ Ֆրէյտանի , սկսուատղահմայութեան հին գիրքերն իմաստափել և այնպիսի կետի մը հասաւ , որ խիստ լաւ կերպով կրնար կանխագուշակութիւններ ընել : Իրարու յաջորդող և ՚ի միասին ամբողջ մը կազմող երեք արտարուածներ յօրինելու գաղափարը . Երիշունի փոխանուածէ , որոյ Ադամեմնոնի ընաւնեաց վերայ գրած ողբերգութիւնները Եռարարուած կըշուածներն են : Բայց Շիլէր Վալլանսդէնի երեք արարուածները աւելի սերտիւ իրարմութիւններ , զոր իւր յոյն նախորդը ըրած չէր : Ըստ Շիլէրի՝ առաջնին արարուածը ներածութիւն մը կամ նախաչափամ’է , առանց որ և է գործողութեան : Միայն երկրորդ արարուածին մէջ , զոր Բիգովոմինիք անուանածէ , գործողութիւնը կը սկսի եւ երրորդը՝ Վալլանսդէնի մահուամբը կը վերջանայ :

Բայց այս ներածութիւնը , որ միայն քանի մի տեսարաններ կը բավանդակիէ , ոչ նուազ հանձարեղ արտադրութիւն մ’է , սա ճշգութեան եւ հմտութեան գլուխ — գործոց մ’է : Հեղինակը կարողացած է 177 դարու բանակաց որոշիչ նկարագրիները քանի մի տեսարանաց մէջ ամփափել : Մի և նոյն դրօշին ներբեւ ժողովուած այնշափ այլ և այլ զօրաց բարբերը , իրենց քաջորդութեանց պատմութիւնը , երենց զօրապետին զարմանալի բարձր կարողութիւնը , որ միայնակ կը կառավարէր այս անկիրթ հրանները , այս ամեն էջերը պատմութէն քաջուած են :

(Նորանուիչն)

ԱԶԴԻ ԱՌ ԱԱՀԱՊԱՐՀՈՐԴԻ ՈՒԹՏԱԿՈՐԾ

Յատոնց ՚ի վեր Յոսպեի նաւաշը լսերը թէ ցամաքէն շոգենաւուը և թէ շոգենաւէն ցամաքը մ.թ ու խոտառները տանել և բերելու ժամանակ մէկ կամ երկու զուրուշի կը տանինք ըսելով, երբեմն ալ առանց հարցնելու բունի զանոնիք իրենց նաւակներուն մէջ իջնելով, քիչ մը հեռանալէն ետքը մինչեւ մէկ մէճիսիյէ և մէկ լիրա տնագամ առած և ուխտաւորները նեղած և վիասած են : Ս. Աթոռը ուխտաւորները այս նեղութիւնէն և վիսուէն այսուհետեւ աղատ ողունելու նպատակաւ Յո կպէի նաւալորներէն երկուքին կուրծքը պղնձէ լուսնաձեւ տախտակ մը իրը նշան կտիսէլ տուաւ, որուն վրայ ՆԱԽԱՍՏԻՔ ՀԱՅՈՅ ՎԱՆՈՒՅ գրուած է, պատաւիրելով որ ուխտաւորներէն ոչ զրամ առնեն և ոչ ստիտիկութիւն ընեն, այլ եկալ ուխտաւորները մինչեւ վանիքը հասցնելէն ետքը վարձքերնին ստանեան, զոր նոյն վանիքի Արժ. Տեսուցը պիտի սրոշէ ժամանակին եւ եղանակին համեմատ : Այս կտրդագրութիւնը կը ծանուցանեմք ՚ի գիտութիւն թէ եկող և թէ գնացող ուխտաւորաց :

1876 ԴԵԿ. 29

յԵՐԱ-ԱՊԵԼԾ

՚ Վահա Ս. Յակովէտանց :

ԺԱՄԱՆԵց ԳԵՐԱՊԱՄԲԻ ԱՍՏՈՒՃԱ-

ՄԱՐ Ա. Ն. Ա. Կ Ա. Դ Ա. Կ Ա. Ն Բ
Ա. Ծննդեան հանգէսներն խաղաղ զութեամբ կատարուեցան . թէ եւ Յոյնք փորձ փարձեցին նոր խոսվութիւն յարուցանել և մեր արտրողութիւններն խանգարել և այս նպատակաւ իրենց ժաղովուրդը կանչելու համար զանկեր զարկին, բայց չաշխղեցան - Ամսոյս 5ին ողջամբ ՚ի Ս. Աթոռս

ԵՈՒԹԵՄՈՒ ՈՒԽՏԱՆՈՐԼԱՐԸ ԻԼԱՆ

Եօթէտէն պէրի Եաֆա գայլգչը լսրը կէրէք գարստան վարօրա վէ կէրէք վարօրտան գարայա պիր եախօս իքի զուրուշ կէօթիւրիւրիւզտէրէք պաղէն տախի սօրմագորզըն ձէպէն Ուխտաւորլարմըզը քէնտի գայլգլարնա ալուստան սօնրա պիր մէճիսիյէյէ վէ հաթթա պիր լիրայա գատար ալքո զսհմէթ վէ վիան վէրտիրլէրի ջոդ տէֆա մէշչուտ վէ մէսմու օլուսլընան, պունտան պէցըլ Ուխտաւորլարմըզը պու էզիւէթ վէ վիսնտան գուրթարմագ նիյէթլիւէ Եաֆա գատիքնը լարմըզը իրամինին կէօթիւրիւնէ իւզէրինատէ ՆԱԽԱՍՏԻՔ ՀԱՅՈՅ ՎԱՆՈՒՅ իպորէսի եազըլմըզը թունճտան պիրէք նշանէ ասըլըպ՝ Ուխտաւորլարմըզը էզիւէթսիզ վէ ֆիաթ քէսմէկսիզին ալքո Եաֆա վանրընա գատար կէթմիմէթէրի թէնդին օլուսմուշ, վէ իւճրէթէրի տախի Եաֆատաքի վանքըլըզն թէխի Արժ. վարդապետ թարտիքնտան վագթա վէ հավայա կէօթէթոյին օլանաճագ ֆիաթ իւզիէ Ուխտաւորլարտան թալէպ օլմուը գարարլաշուրմըզը օլմոզէ, կէրէք կէթէն վէ կէրէք կիտէն Ուխտաւորլարմըզը մոլիւմիւ օլմագ իւզիէ իւթար օլունուը :

Ժամանեց ԳԵՐԱՊԱՄԲԻ ԱՍՏՈՒՃԱ-
ՄՈՒՐ ՆՈՐԱՊԱՄԱԿ ԵԱՓԻՍԿՈՊԱՄՈՐ . թէ եւ նոյն օրը Միաբանութիւնը մեծաւ մասմբ Ս. Ծննդեան առթիւ Բնթլե-
հէմէք, այլ սակայն դարձեալ արժա-
նավայել չբովլընդունուեցաւ :

Նախորդ ամսոյ Աբնէ 284 երեսի ծանօթութեան մէջ աժամացուցի ու զվիչն հնարեցն կտրդալու ակզ պէտք է աժամացուցի նորածեւ խուսակ մը հնարեցն կարգաւ :

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՏԱՐԵ	1-6
Ի շերիմ սիրելեաց խոց . — Եղերերգ	6-8
Աստղագիտական . — Բնական և տարրաբանական կազմութիւն արեգական . (Եղբայրինելք)	8-12
Մարդ . (Եղբայրինելք)	13-17
Կննագրութիւն Եղիլէրի . (Եղբայրինելք)	18-23
Աղջ առ ձանապարհորդ Ռւխտաւորս . — Եօլձու Ռւխտաւորլարա իլոն	24
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ	24

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամսէ ամիս կը հրատավակուի 24 երեսէ բազկացեալ մ. կուկէս
ութածալ թղթալ .
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ ԱՇՀՅԱԽՈՒՆ . ճանապարհի ծախքով
միասին . կանխիիկ վճարելի .
- Գ. Զատ տետրակ առնել ուղարկ ողեաց է ամեն մէկ տետրին շորո դա-
հեկան վշտէ .